



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 08(322) 02.05.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
59	««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ ՀՕ-1-Ն օրենքը.....	4
60	««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ ՀՕ-2-Ն օրենքը	6
61	««Ձենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ ՀՕ-3-Ն օրենքը	9
62	««Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ ՀՕ-4-Ն օրենքը	10
63	««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ ՀՕ-5-Ն օրենքը	14
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
64	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 556 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 156-Ն որոշումը...	18
65	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ֆինանսական միջոցների օգտագործման թույլտվություն տալու մասին» ԼՂՀ կառավարության N 252-Ն որոշումը.....	19
66	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 6-ի N 609-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 267-Ն որոշումը.....	21
67	«Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 270-Ն որոշումը.....	22
68	«Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով	

	գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելու կարգն ու արձանագրության ձևը սահմանելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 538-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության N 275-Ն որոշումը.....	23
69	«2017 թվականի համար էլեկտրական էներգիայի ու բնական գազի հաղորդման (փոխադրման) և բաշխման ցանցերում նորմատիվային (բնական) կորուստների առավելագույն չափերը սահմանելու մասին» ԼՂՀ կառավարության N 276-Ն որոշումը.....	28
70	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի N 853-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 277-Ն որոշումը.....	29
71	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության իրանման 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 278-Ն որոշումը.....	31
72	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N608-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 279-Ն որոշումը.....	39
73	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում 2017-2018 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտությունների ցանկը, անվճար և վճարովի ուսուցման տեղերը և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա և հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրով տեղերը՝ ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 280-Ն որոշումը.....	43
74	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 281-Ն որոշումը.....	48

75	«Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Լեոնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացվելիք 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի մասին» ԼՂՀ կառավարության N 282-Ն որոշումը.....	53
76	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 283-Ն որոշումը....	57
77	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 722 որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 284-Ն որոշումը.....	61
78	«Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 285-Ն որոշումը.....	62
79	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 286-Ն որոշումը.....	65
80	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 292-Ն որոշումը.....	68
ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
81	ԼՂՀ Գերագույն դատարանի քրեական գործ ԸԻԴ 0052/01/16թ. որոշումը.....	70
82	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 0158/02/16թ. որոշումը.....	76

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
մարտի 30-ին

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-2 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում «թ» կետի վերջակետը փոխարինել միջակետով և հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ» կետով.

«ժ) «Պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը»:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածում «ա» կետից հանել «կրտսեր լեյտենանտը» և» բառերը:

Հոդված 3. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 23. «Ենթասպա» և «Ավագ ենթասպա» փրկարարական կոչումներ շնորհելը

1. «Ենթասպա» փրկարարական կոչում շնորհվում է՝

ա) շարքային կազմի այն ծառայողներին, որոնց զբաղեցրած հաստիքային պաշտոնը համապատասխանում է «ենթասպա» փրկարարական կոչմանը ու լրացել է նախորդ փրկարարական կոչումը կրելու ժամկետը.

բ) փրկարարական ծառայության ընդունված և ենթասպայական պաշտոնի նշանակված այն քաղաքացիներին, ովքեր ունեն առնվազն միջնակարգ կամ միջնակարգ մասնագիտական կրթություն:

2. «Ավագ ենթասպա» փրկարարական կոչում շնորհվում է՝

ա) այն ենթասպաներին, ովքեր որպես ենթասպա ծառայել են հինգ և ավելի տարի, որից առնվազն մեկ տարին՝ ավագ ենթասպաներով համալրման ենթակա պաշտոններում.

բ) ենթասպայական պաշտոններում տասը և ավելի տարի անբասիր ծառայության համար՝ անկախ զբաղեցրած պաշտոնից»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածի «ե» կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հերթական կոչումը կարող է շնորհվել վաղաժամկետ՝ փրկարարական ծառայության կազմակերպման գործում նշանակալի անձնական վաստակ և ներդրում ունեցող, պաշտոնեական պարտականությունները բարեխիղճ կատարող ծառայողներին, բայց տվյալ

կոչումով առնվազն վեց ամիս ծառայելուց հետո և զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված փրկարարական կոչումից ոչ բարձր:»:

Հոդված 6. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «30» թիվը փոխարինել «35» թվով:

Հոդված 7. Օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ մասից հանել «կրտսեր» բառը:

Հոդված 8. Օրենքի 61-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) անձնական նախաձեռնությամբ գրավոր զեկուցագրի հիման վրա, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու, պետական այլ հատուկ ծառայություն տեղափոխվելու, հանրային ծառայության այլ պաշտոններում նշանակվելու կապակցությամբ.»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ.1» կետ՝

«բ.1) պայմանագրով ամրագրված՝ ծառայողի կողմից փրկարարական ծառայության անցման և պայմանագրի պայմանները խախտելու դեպքում.»,

գ. «ը» կետը «դեպքում» բառից հետո լրացնել «՝ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից» բառերով,

դ. «ժգ» կետը «կապակցությամբ» բառից հետո լրացնել «կամ պայմանագրի գործողության դադարման դեպքում» բառերով.

2) 2-րդ մասում «ղեկավարը» բառից հետո լրացնել «՝ հրամանում նշելով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ազատման հիմքը» բառերը:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 15
Ստեփանակերտ
ՀՕ-1-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
մարտի 30-ին

**«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2003 թվականի սեպտեմբերի 17-ի ՀՕ-64 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում «վիրաբուժական միջամտություն» բառերը փոխարինել «բժշկական միջամտություն» բառերով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-14-րդ կետերով.

«12) **բեղմնականիում**՝ անցանկալի հղիության կանխում տարբեր միջոցների և (կամ) մեթոդների կիրառմամբ.

13) **անպտղություն**՝ զույգի մեկ տարի կանոնավոր սեռական կյանքով ապրելու և բեղմնականիւման միջոցներ և (կամ) մեթոդներ չօգտագործելու դեպքում կնոջ հղիության բացակայություն, բացառությամբ կրծքով կերակրման կամ դաշտանադադարով պայմանավորված դեպքերի.

14) **հարազատ**՝ արյունակցական 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի կապ ունեցող անձ:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «մեթոդների» բառը փոխարինել «միջոցների և մեթոդների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) վերնագրի «**Բեղմնականիւման միջոցների**» բառերը փոխարինել «**Բեղմնականիւման միջոցների և (կամ) մեթոդների**» բառերով.

2) 1-ին մասի «բեղմնականիւման արդյունավետ միջոցներից» բառերը փոխարինել «բեղմնականիւման արդյունավետ միջոցներից և (կամ) մեթոդներից» բառերով.

3) 2-րդ մասի «բեղմնականիւման առկա միջոցների» բառերը փոխարինել «բեղմնականիւման առկա միջոցների և մեթոդների» բառերով.

4) 3-րդ մասի «պտղաբերության կարգավորման միջոցների» բառերը փոխարինել «պտղաբերության կարգավորման միջոցների և (կամ) մեթոդների» բառերով.

5) 4-րդ մասի «բեղմնականիւման միջոցները» բառերը փոխարինել «բեղմնականիւման միջոցները և մեթոդները» բառերով:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 10. Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը)

1. Յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման (աբորտի) իրավունք: Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը) (այսուհետ՝ ընդհատում)՝

1) մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է կնոջ գրավոր դիմումի համաձայն: Բժշկական ցուցումների դեպքում ընդհատումը

մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը իրականացվում է կնոջ գրավոր համաձայնությամբ.

2) 12-ից մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է բացառապես բժշկական (ներառյալ՝ սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության դեպքում) կամ սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր համաձայնությամբ:

2. Բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է:

3. Ընդհատումն անչափահասի (օրենքով նախատեսված լրիվ գործունակություն ձեռք չբերելու դեպքերում) դիմումով կատարվում է նրա օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առողջապահական հաստատության գործադիր մարմնի ղեկավարի համապատասխան ակտով ստեղծված մշտապես գործող բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում ընդհատումից առաջ բժիշկը իրեն դիմած հղի կնոջը պարտավոր է տրամադրել ընդհատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու ժամանակահատված՝ երեք օրացուցային օր ժամկետով (իսկ եթե 3-րդ օրացուցային օրը համընկնում է հղիության 12-րդ շաբաթը լրանալու օրվան, ապա մինչև այդ ժամկետը լրանալը), որը հաշվվում է կնոջ՝ ընդհատման համար բժշկին առաջին անգամ դիմելու պահից:

5. Ընդհատումը կարող է իրականացվել միայն մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող հիվանդանոցային առողջապահական հաստատություններում:

6. Ընդհատման բժշկական միջամտությունն իրականացնելուց անմիջապես առաջ բժիշկը պարտավոր է կնոջը ընդհատման հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ տրամադրել անվճար խորհրդատվություն, որի մասին բժիշկը գրառում է ընդհատման համար դիմած կնոջ բժշկական փաստաթղթերում, և որը հաստատվում է կնոջ ստորագրությամբ:

7. Ընդհատման բժշկական միջամտությունն իրականացնելուց անմիջապես հետո բժիշկը պարտավոր է կնոջը անցանկալի հղիությունը կանխելու միջոցների և (կամ) մեթոդների ընտրության վերաբերյալ տրամադրել անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն, որի մասին բժիշկը գրառում է ընդհատման համար դիմած կնոջ բժշկական փաստաթղթերում, և որը հաստատվում է կնոջ ստորագրությամբ:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը հաստատում է հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները, ներառյալ՝

1) ընդհատման հակացուցումները և անհրաժեշտ հետազոտությունների ցանկը.

2) ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումների ցանկը.

3) մինչև 12 շաբաթական ընդհատման համար հղի կնոջ կողմից ներկայացվող գրավոր դիմումի ձևը.

4) բժշկական կամ սոցիալական ցուցումներից ելնելով՝ ընդհատման համար հղի կնոջ կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից ներկայացվող գրավոր համաձայնության ձևը.

5) անչափահասի (օրենքով նախատեսված լրիվ գործունակություն ձեռք չբերելու դեպքերում) հղիության ընդհատման համար նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից գրավոր համաձայնության ձևը:

9. Սույն հոդվածով սահմանված պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:»:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը» բառերը փոխարինել «կառավարությունը» բառով:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «18-35 տարեկան» բառերը փոխարինել «նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20-35 տարեկան» բառերով.

2) 2-րդ մասի «(18 տարեկանից սկսած)» բառերը փոխարինել «(նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած՝ 20 տարեկանից սկսած)» բառերով.

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Փոխնակ մայրը միաժամանակ չի կարող լինել ձվաբջջի դոնոր:».

4) 13-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 15
Ստեփանակերտ
ՀՕ-2-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
մարտի 30-ին

**«ՋԵՆՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ջենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-41 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում`

1) «ազգային անվտանգության» բառերից հետո լրացնել «, արտակարգ իրավիճակների պետական ծառայության» բառերը.

2) հանել «, քաղաքացիական պաշտպանության» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ.ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 15
Ստեփանակերտ
ՀՕ-3-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
ապրիլի 20-ին

**«ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-182 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրական օրենքից» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությունից» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ձեռնարկությունների, հիմնարկների,» բառերը փոխարինել «անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու» բառերով.

2) 1-ին մասի «ա» ենթակետը «սահմանված ձևով» բառերից հետո լրացնել «վարել զինապարտների գրանցամատյանը,» բառերով.

3) 2-րդ մասի «ա» ենթակետի միջակետը փոխարինել վերջակետով և ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Նախագորակոչային տարիքի զինապարտների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարել մինչև նրանց գորակոչային տարիքը լրանալու ժամանակահատվածը, իսկ գորակոչային տարիքը լրանալու դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ստացած տարկետման ժամանակով.».

4) 5-րդ մասի երկրորդ պարբերության «Ազատագրվման, կալանքի և ազատության սահմանափակման» բառերը փոխարինել «Ազատագրվման կամ կալանքի» բառերով, իսկ «և պահեստագորայինների» բառերը հանել:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Զինվորական հաշվառման և պարտադիր զինվորական ծառայության գորակոչի իրականացման գործընթացում քաղաքացիների պարտականությունները».

2) 1-ին մասի «համար» բառից առաջ լրացնել «, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու» բառերը.

3) 3-րդ մասում՝

ա. «զինվորական հաշվառումից դուրս գալուց և» բառերը հանել,

բ. «եռօրյա» բառը փոխարինել «յոթնօրյա» բառով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատագրվման ձևով պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:».

4) 4-րդ մասը «ընտանեկան» բառից առաջ լրացնել «առողջական վիճակի,» բառերով:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը «անցկացնելու» բառից հետո լրացնել «, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բուժում իրականացնելու» բառերով:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի երկրորդ նախադասության «գորակոչվում (ուղարկվում) են» բառերը փոխարինել «18 տարեկանը լրացած լինելու դեպքում ուղարկվում են» բառերով, իսկ «՝ ընդհանուր հիմունքներով» բառերը հանել:

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մինչև 18 տարեկանը լրանալը ռազմական ուսումնական հաստատությունից ազատված կամ հեռացված անձինք հաշվառվում են իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատի գորակոչային բաժնում և 18 տարեկանը լրանալուց հետո հայտարարված գորակոչի ժամանակ ենթակա են գորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության՝ ընդհանուր հիմունքներով:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Նախկինում ազատագրկման դատապարտված և ազատագրկման վայրում երեք տարուց պակաս ժամկետով պատիժ կրած անձանց պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու կամ պահեստագործում հաշվառելու կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարը:»:

2) 7-րդ մասը «ժամանակ» բառից հետո լրացնել «, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության ընթացքում» բառերով:

3) 7-րդ մասի «ո» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ո» երկկողմանի ծնողագուրկ գորակոչիկները, ինչպես նաև միակողմանի ծնողագուրկ այն գորակոչիկները, որոնք չունեն չափահաս քույր կամ եղբայր.»:

4) 8-րդ մասի «Զինված ուժեր կամ այլ զորքեր միաժամանակ» բառերը փոխարինել «Հայտարարված գորակոչի ընթացքում պարտադիր զինվորական ծառայության» բառերով:

Հոդված 7. Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասության «օրենքով» բառը փոխարինել «հոդվածով» բառով:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասության «հիման վրա» բառերը փոխարինել «, ինչպես նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի հիման վրա առողջական վիճակի պատճառով» բառերով:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «նախապատրաստում» բառը փոխարինել «կայացնում են նախնական եզրակացություն» բառերով:

Հոդված 10. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին պարբերության «արձակվում են» բառերից հետո լրացնել «պահեստագործ» բառը.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատագրկման դատապարտված անձինք դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա հանվում են զորամասի անձնակազմի ցուցակներից և հաշվառվում են իրենց գորակոչն իրականացրած զինվորական կոմիսարիատի գորակոչային բաժնում, իսկ ազատագրկման վայրում պատժի

կրումից ազատվելուց հետո հայտարարված գորակոչի ժամանակ ենթակա են գորակոչման պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելու, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, ինչպես նաև եթե չեն օգտվում սույն օրենքով նախատեսված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով կամ առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու իրավունքից, որոնց առկայության պարագայում հաշվառվում են պահեստագործում՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:»:

Հոդված 11. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.

2) երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«սույն օրենքով սահմանված դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները.».

3) հինգերորդ պարբերությունը «զինապարտները» բառից առաջ լրացնել

« և 27 տարեկանը լրացած» բառերով:

Հոդված 12. Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 26. Պահեստագործի շարքային կազմի վարժական հավաքներ անցնելը և զինվորական վարժանքների ու գորավարժությունների կանչելը

1. Առաջին և երկրորդ կարգի պահեստագործայինները ռազմական ունակությունները կատարելագործելու և վերապատրաստելու նպատակով յուրաքանչյուր տարի մինչև մեկ ամիս ժամկետով կանչվում են վարժական հավաքների: Նշված պահեստագործայինները կարող են վարժական հավաքի կանչվել պահեստ արձակվելուց հետո՝ մեկ տարուց ոչ շուտ:

2. Առաջին և երկրորդ կարգի պահեստագործի առաջին խմբում հաշվառված զինվորները, սերժանտները և ենթասպաները, որոնք պատրաստվում են սպայական պաշտոնների համար, վարժական հավաքների են կանչվում մինչև երեք ամիս ժամկետով:

3. Երրորդ խմբի պահեստագործում հաշվառված անձինք վարժական հավաքների չեն կանչվում:

4. Վարժական հավաքները հայտարարվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ յուրաքանչյուր տարվա գորահավաքային նախապատրաստության պլանների հիման վրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատած միջոցառումների ցանկի, ժամկետների և ներգրավվող թվաքանակի ու մասնագիտությունների համաձայն:

5. Առաջին կարգի պահեստագործում հաշվառված քաղաքացիները զինված ուժերի գորահավաքային պատրաստականության ստուգման նպատակով խաղաղ ժամանակ կարող են կանչվել զինվորական վարժանքների (հրամանատարաշտաբային կամ շտաբային)՝ մինչև տասն օր ժամկետով, կամ գորավարժությունների (գորախաղերի)՝ դրանց ամբողջ տևողության ժամկետով: Զինվորական վարժանքները (հրամանատարաշտաբային կամ շտաբային) և գորավարժությունները (գորախաղերը) հայտարարվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:»:

Հոդված 13. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«- բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցած և սահմանված կարգով սպայական կոչում շնորհված քաղաքացիներից.»:

Հոդված 14. Օրենքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 29. Պահեստագործի սպայական և ենթասպայական կազմերի վարժական հավաքներ անցնելը և զինվորական ծառայության կանչելու կարգը

1. Առաջին խմբի պահեստագործայինները ռազմական հմտությունների կատարելագործման և վերապատրաստման նպատակով յուրաքանչյուր տարի մինչև մեկ ամիս ժամկետով կանչվում են վարժական հավաքների:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում մինչև երկու ամսով երկարաձգել պահեստագործի սպաների և ենթասպաների վարժական հավաքների ժամկետները:

3. Պահեստագործի սպաները խաղաղ ժամանակ կարող են կանչվել՝

ա) զորակոչի միջոցով մինչև երեք տարի ժամկետով պարտադիր զինվորական ծառայության՝ կառավարության կողմից որոշվող մասնագիտությունների գծով և քանակով.

բ) պայմանագրային զինվորական ծառայության՝ անձնական ցանկությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 15. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «պաշտոնային դրույքաչափին» բառերը փոխարինել «դրամական բավարարմանը» բառերով.

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունք ձեռք չբերած և պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները չեն կարող նշանակվել հանրային ծառայության մեջ ընդգրկված պաշտոններում:»:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ՝

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 29

Ստեփանակերտ

ՀՕ-4-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
ապրիլի 20-ին

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-36-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում նշված գումարների չափերն ավելացնել 450.0-ական մլն դրամով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածով հաստատված եկամուտների և ծախսերի գումարների չափերն ավելացնել 450,000.0-ական հազար դրամով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

(հազար դրամներով)

	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
ԸՆԴԱՄԵՆԸ	450,000.0
<i>այդ թվում՝</i>	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	450,000.0

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

(հազար դրամներով)

Բաժին	Խումբ	Դաս		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	450 000.0
			<i>այդ թվում՝</i>	
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	450 000.0
			<i>այդ թվում՝</i>	
	2		Այլ ծախսեր	450 000.0
		1	Այլ ծրագրեր	450 000.0

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածով հաստատված աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

(հազար դրամներով)

	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	450 000.0
<i>այդ թվում՝</i>	
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ	450 000.0

	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները բերված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
այդ թվում՝	
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	450 000.0
այդ թվում՝	
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	450 000.0
այդ թվում՝	
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	450 000.0

Հոդված 6. Օրենքի N 1 հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն օրենքի N 1 հավելվածի:

Հոդված 7. Օրենքի N 4 հավելվածի N 2 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն օրենքի N 2 հավելվածի:

Հոդված 8. Սույն օրենքի N 1 և N 2 հավելվածները համարվում են սույն օրենքի անբաժանելի մասերը:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. ապրիլի 29
Ստեփանակերտ
ՀՕ-5-Ն

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ պակասեցումները՝ փակագծերում)
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	450, 000.0
			այդ թվում՝	
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	450, 000.0
	2		Այլ ծախսեր	450, 000.0
		1	Այլ ծրագրեր	450, 000.0
		02	Կապիտալ ներդրումներ	450, 000.0
			ԼՂՀ կառավարություն	450, 000.0

Ռադիոհաճախականության օգտագործման վճարների` 2017 թվականի համար սահմանված չափերը

Հ/Հ	Էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեսակը	Հաշվարկման միավորը	Ռադիոհաճախականության օգտագործման վճարի չափը (դրամ)
1.	Ռադիոռելեային կապի գծեր GSM ցանցերի համար ռադիոռելեային կապի գիծ Ռադիոռելեային կապի գիծ	մեկ հաղորդող ռադիոհաճախականություն, մեկ հատված մեկ հաղորդող ռադիոհաճախականություն, մեկ հատված	50, 000 20, 000
2.	Անլար հասանելիության լայնաշերտ ցանցեր (բացառությամբ սույն աղյուսակի 4-րդ մասով նշված ցանցի տեսակների) - Ստեփանակերտ քաղաքի համար - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մեկ շրջանի համար - անլար ամրակցված հեռախոսացանց (կողի բաժանմամբ բազմակի մուտք` CDMA)	1ՄՀց ռադիոհաճախականության գոտի 1ՄՀց ռադիոհաճախականության գոտի 1,25 ՄՀց ռադիոհաճախականության գոտի	115, 000 17, 250 8, 750
3.	Ռադիոկապի շարժական ցանցեր	մեկ բազային (վերահաղորդիչ) կայան, մեկ հաղորդող ռադիոհաճախականություն (բազային (վերահաղորդիչ) կայանի բացակայության դեպքում` ըստ մեկ հաղորդող ռադիոհաճախականության) մինչև 25 Վտ ներառյալ հաղորդչի հզորություն 25 Վտ-ից բարձր հաղորդչի հզորություն	21, 000 140, 000
4.	Բջջային կապի ցանցեր (շարժական կապի գլոբալ համակարգ` GSM, համընդհանուր հեռահաղորդակցության շարժական համակարգ (լայնաշերտ կողի բաժանման բազմակի մուտք)` UMTS (WCDMA) տեխնոլոգիաների կիրառմամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար	1ՄՀց ռադիոհաճախականության գոտի	16, 800, 000
5.	Արբանյակային կապի երկրային կայաններ (ամրակցված, շարժական)	անկախ կայանների քանակից, մեկ ռադիոհաճախականություն	35, 000

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2017թ.

N 156-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 556 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշու է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 556 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) N1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 16-րդ կետով.

«16. Զինձառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, ովքեր բժշկատոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամ չեն ճանաչվել (հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում՝ բժշկատոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից կազմված վերականգնողական անհատական ծրագրի շրջանակներում):»:

2) N2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 14¹-րդ կետով.

«14¹. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում կարող են ստանալ բնակչության առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձինք՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի համապատասխան հրամանով սահմանված «Բաց դռների օր» միջոցառման շրջանակներում):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2017թ.

N 252-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N865-Ն որոշման N2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N865-Ն որոշման N2 հավելվածի 09 բաժնի 6 խմբի 1 դասի «12. Կենտրոնացված կարգով կրթական հաստատությունների համար գույքի ձեռքբերում» ծրագրի միջոցներից 1 969 000 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսուսինը հազար) ՀՀ դրամ գումար հատկացնել «Արցախի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ գույք ձեռք բերելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Բննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	-	5000,0	-	-
	1		Հանգստի և սպորտի ծառայություններ	-	5000,0	-	-
		1	Հանգստի և սպորտի ծառայություններ	-	5000,0	-	-
		05	Կենտրոնացված կարգով մարզագույքի և մարզահանդերձանքի ձեռքբերում	-	5000,0	-	-
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	5000,0	-	-
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	(5000,0)	-	-
	1		Նախադպրոցական կրթություն	-	(8969,0)	-	-
		1	Նախադպրոցական կրթություն	-	(8969,0)	-	-
		03	Նախադպրոցական հիմնարկներ	-	(8969,0)	-	-
			ԼՂՀ կառավարություն	-	(8969,0)	-	-
	6		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	3969,0	-	-
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	3969,0	-	-
		12	Կենտրոնացված կարգով կրթական հաստատությունների համար գույքի ձեռքբերում	-	3969,0	-	-
			ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	3969,0	-	-

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 ապրիլի 2017թ.

N 267-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 609-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016-2017 ուսումնական տարվա պետական հանրակրթական, մանկապատանեկան արտադպրոցական և նախադպրոցական, բարձրագույն, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ցանցի հաստատման մասին» N 609-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) որոշումը լրացնել նոր 3.1-ին կետով.

«3.1 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի «Քարվաճառի Վ.Սարոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում բացել երկու նախադպրոցական խումբ՝ շաբաթական հնգօրյա և օրական ութժամյա տևողությամբ:».

2) որոշմամբ հաստատված հավելվածի «7. Դպրոցին կից նախադպրոցական խմբեր» աղյուսակի յոթերորդ տողի «2» և «25» թվերը փոխարինել «3» և «57» թվերով, իսկ «Ընդամենը» տողի «65» և «1371» թվերը փոխարինել «66» և «1403» թվերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի «Քարվաճառի Վ.Սարոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության և անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2017թ.

N 270-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***

1. 2017 թվականի մայիսի 8-ի աշխատանքային օրը տեղափոխել 2017 թվականի մայիսի 20-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 275-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՐԱՎՈՐ ՉՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ (ԱՅՍԻՆՔՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԵՎ (ԿԱՄ) ԳՐԱՎՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ) ԵՎ (ԿԱՄ) ՆՈՐ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՑ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՓԱՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 31-Ի N 538-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել՝

1) աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստի վերաբերյալ արձանագրության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 31-ի «Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանելու մասին» N 538-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԱՇԽԱՏՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՐԱՎՈՐ
ՉՁԵՎԱԿԵՐԱԿԵԼՈՒ (ԱՅՍԻՆՔՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԵՎ (ԿԱՄ) ԳՐԱՎՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ)
ԵՎ (ԿԱՄ) ՆՈՐ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ
ՀԱՅՑ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՓԱՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ**

1. Մույն կարգով կարգավորվում են աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելու կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրվում է հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ հարկային մարմնի կողմից իրականացվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության, ինչպես նաև հարկային մարմնի կողմից առանց անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի և (կամ) առանց գրանցման հայտի ներկայացման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված ստուգումների (սույն կարգի իմաստով՝ ստուգում) շրջանակներում: Մույն կարգի իմաստով՝ աշխատողի աշխատանքի ընդունումը համարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված, եթե առկա չէ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ և (կամ) գրավոր պայմանագիր, իսկ նոր աշխատողի համար գրանցման հայտը համարվում է սահմանված ժամկետում չներկայացված, եթե այն չի ներկայացվել մինչև ստուգումը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը:

3. Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) դեպք (փաստ) է համարվում նաև այն դեպքը, երբ ստուգում իրականացնող անձինք գործատուի մոտ իրականացվող ստուգման շրջանակներում գործատուի մոտ առկա համապատասխան վճարահաշվարկային կամ այլ փաստաթղթերի (մասնավորապես, աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի) հիման վրա արձանագրում են տվյալ գործատուի մոտ նախկինում փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ եղած վարձու աշխատողի առկայությունը (աշխատողի համար աշխատավարձ և դրան հավասարեցված այլ միջոցներ կամ եկամտային հարկ հաշվարկված լինելու հանգամանքը)՝ առանց այդ պահին աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի առկայության:

4. Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք իրականացնում են հետևյալ քայլերը՝

1) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի իմաստով՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող) անձանց ցանկը՝ նշելով տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը.

2) գործատուից պահանջում են փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային

օրենսգրքի 13-րդ հոդվածի իմաստով՝ աշխատանքային հարաբերությունների մեջ նախկինում գտնված) անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը և (կամ) գրավոր պայմանագրերը, իսկ անհրաժեշտության և առկայության դեպքում՝ նաև գործատուի կողմից հաստատված հաստիքացուցակը, գործատուին ծառայություններ մատուցող կամ գործատուի համար աշխատանքներ կատարող ֆիզիկական անձանց կամ այլ գործատուի մոտ որպես վարձու աշխատող գրանցված (ձևակերպված) ֆիզիկական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերը, ուսումնական, արտադրական կամ գիտահետազոտական պրակտիկա անցնող ուսանողների, գործատուի մոտ վերապատրաստվող անձանց հետ կնքված պայմանագրերը, գրավոր համաձայնությունները:

3) հարկային մարմնի տեղեկատվական բազայից արտահանում են գործատուի կողմից ստուգումը սկսելու օրվան նախորդող օրվա դրությամբ ներկայացված գրանցման հայտում փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողների ցանկը:

4) ուսումնասիրում են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի և (կամ) գրավոր պայմանագրերի համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին:

5) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ և (կամ) գրավոր պայմանագիր և (կամ) որոնց մասով ստուգումը սկսելու օրվան նախորդող օրվա դրությամբ չի ներկայացվել գրանցման հայտ, բացառությամբ՝

ա. գործատուի մոտ ուսումնական, արտադրական կամ գիտահետազոտական պրակտիկա անցնող ուսանողների կամ գործատուի մոտ վերապատրաստվող անձանց, էթե գործատուի մոտ առկա է նշված փաստը հիմնավորող ապացույց (գործատուի և ուսումնական հաստատության միջև գրավոր պայմանագիր, ուսումնական հաստատության կողմից գործատուի մոտ գործուղված՝ պրակտիկա անցնող ուսանողների կամ վերապատրաստում անցնող անձանց ցանկ),

բ. քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա գործատուին ծառայություններ մատուցող կամ գործատուի համար աշխատանքներ կատարող ֆիզիկական անձանց (էթե առկա է համապատասխան գրավոր պայմանագիր, գրավոր համաձայնություն):

6) փաստաթղթերի ուսումնասիրությամբ, գործատուից գրավոր բացատրություններ վերցնելով՝ պարզում են սույն կետի 5-րդ ենթակետով կազմված ցանկում ներառված անձանց կողմից իրականացվող կամ ստուգվող ժամանակաշրջանում իրականացված աշխատանքային պարտականությունների բնույթը:

7) սույն կետի 5-րդ ենթակետով նշված ցանկում ներառված անձանց բացատրում են հայտարարություն տալուց հրաժարվելու նրանց իրավունքների մասին և, նրանց համաձայնությամբ, վերցնում են հայտարարություն (բացառությամբ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված այն դեպքերի, երբ ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած անձն այլևս տվյալ գործատուի մոտ չի աշխատում), որտեղ նշվում են՝

ա. հայտարարություն տվող անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

բ. հայտարարություն տվող անձի կողմից իրականացվող աշխատանքային գործառնությունների հակիրճ նկարագրությունը,

գ. տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը:

8) սույն կետի 7-րդ ենթակետով ներկայացված հայտարարությունը ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստի վերաբերյալ կազմվող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 26-ի N 275-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) անբաժանելի մասն է:

5. Արձանագրության մեջ պարտադիր նշվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված ցանկում ընդգրկված անձի (անձանց) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, նրա (նրանց) կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքերում արձանագրության մեջ նշվում են նաև այն հանգամանքները, որոնցով

հիմնավորվում է գործատուի կողմից ստուգվող ժամանակաշրջանում նախկինում աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը:

6. Արձանագրությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող ստուգման ակտի անբաժանելի մասն է:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ձև

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

_____ 20 թ.
(կազմման վայրը)

Համաձայն _____ 20 թ. N _____ հանձնարարագրի՝
(ստուգում իրականացնող պետական կառավարման մարմնի (ստորաբաժանման) ղեկավարը)

աշխատողների աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստի (անօրինական աշխատանքի) արձանագրման նպատակով

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը, գտնվելու վայրը) (հարկ վճարողի հաշվառման համարը)

մոտ _____ հասցեում գործող _____ - ում
(փաստացի ստուգում անցկացնելու վայրը) (արտադրամասը, առևտրի օբյեկտը, առևտրի իրականացման վայրը և այլն)

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան անցկացված _____
(ստուգման տեսակը)

ընթացքում պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի մոտ աշխատող ստորև նշված _____ (թվերով և տառերով) վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը գործատուի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէ (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը և (կամ) գրավոր պայմանագիրը բացակայում է և (կամ) ներկայացված չէ գրանցման հայտը):

Ն/Հ	Աշխատողի անունը, ազգանունը, հայրանունը	Աշխատանքային պարտականությունների բնույթը (պաշտոնը, մասնագիտությունը)	Հանրային ծառայության համարանիշը	Անձը հաստատող փաստաթղթի		Ծանոթագրություն
				սերիան	համարը	

(ստուգվող ժամանակաշրջանում՝ նախկինում աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու հանգամանքների նկարագրությունը)

Ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք՝

Ստուգմանը մասնակցած տնտեսավարող սուբյեկտի՝

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Արձանագրությունը ստուգման N _____ ակտի անբաժանելի մասն է:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿԱԿԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 276-Ն

ք. Ստեփանակերտ

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՈՒ ԲՆԱԿԱՆ
ԳԱԶԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ (ՓՈԽԱԴՐՄԱՆ) ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ (ԲՆԱԿԱՆ) ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ
ՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***.

1. Սահմանել 2017 թվականի համար էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) և բաշխման ցանցերում նորմատիվային (բնական) կորուստների առավելագույն չափերը՝

1) «ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» փակ բաժնետիրական ընկերության համար՝ 15 տոկոս.

2) «ԱՐՑԱԽԳԱԶ» փակ բաժնետիրական ընկերության համար՝ 5,1 տոկոս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 277-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 853-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշու՛մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված ներդրումների գնահատման, արտոնության տրամադրման և կիրառման կարգը, «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված ներդրումները գնահատող և արտոնություն տրամադրող հանձնաժողովի կազմը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի թիվ 124 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 853-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Եթե ռեզիդենտի (բացառությամբ «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված՝ շահութահարկի 20 տոկոս դրույքաչափով հարկվող գործունեություն իրականացնողների, ինչպես նաև վերակազմակերպված կազմակերպությունների) կանոնադրական կապիտալում սույն որոշմամբ հաստատված ներդրումները գնահատող և արտոնություն տրամադրող հանձնաժողովին հայտ ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում հիմնադրի (մասնակցի) փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը կազմում է առնվազն 100 միլիոն ՀՀ դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ հայտ ներկայացնելու տարում և դրան հաջորդող երկու տարիներին 100 տոկոսի չափով, հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը:».

2) 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) գույքային ներդրումների դեպքում գույքը ներդրողի կողմից պետք է ձեռքբերված և (կամ) կառուցված լինի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում: Գույքային ներդրումները ենթակա են պետական գրանցման և (կամ) նոտարական վավերացման՝ օրենքով սահմանված կարգով.».

3) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Արտոնությունը տարածվում է միայն այն ներդրումների վրա, որոնք ուղղվում են արտադրական բնույթի հիմնական միջոցների ձեռքբերմանը (կառուցմանը):».

Սույն կարգի իմաստով արտադրական բնույթի են համարվում այն հիմնական միջոցները, որոնք անմիջականորեն կապված են ապրանքների արտադրության կամ ծառայությունների մատուցման հետ, և որոնց շահագործումն ուղղակիորեն նպաստում է կազմակերպության արտադրական պրոցեսի ընդլայնմանը, վերազինմանը, վերափոխմանը կամ արդիականացմանը:».

4) 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետ.

«4.1. Արտոնությունը կիրառվում է միայն մեկ անգամ:».

5) 7-րդ կետի՝

ա. 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) գույքային ներդրումների դեպքում՝

ա. ներդրողի կողմից գույքի ձեռքբերումն ու (կամ) կառուցումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

բ. գույքային ներդրումների պետական գրանցումը և (կամ) նոտարական վավերացումը հաստատող փաստաթղթերի պատճենները,

գ. անկախ գնահատողի եզրակացությունը գույքի շուկայական արժեքի վերաբերյալ.»,

բ. 8-րդ ենթակետում «կազմակերպությունների» բառը փոխարինել «կազմակերպության» բառով,

գ. 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) Կանոնադրական կապիտալի համալրման նպատակով ստացված միջոցների՝ հայտը ներկայացնելու պահին օգտագործման ուղղությունները՝ կցելով արտադրական բնույթի հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Արտադրական բնույթի հիմնական միջոցների ձեռքբերման փաստաթղթերի հիմնավորման մասով կիրառվում են «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված պահանջները:».

6) 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետ.

«10.1. Հանձնաժողովը հայտատուի ներդրումային գործընթացի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում կարող է դիմել համապատասխան մարմիններին անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով:».

7) «արտադրական նպատակներով» բառերը փոխարինել «արտադրական բնույթի հիմնական միջոցների ձեռքբերման (կառուցման) նպատակով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 278-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ
ՄՇԱԿԱԲՈՒՑՄԵՐԻ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության խթանման 2017 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն):

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը:

3) նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2017 թվականի ապրիլի 26-ի N 278-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ
ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ԽԹԱՆՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ**

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2017 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
- II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
- IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է, և ընդհանուր ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր: Նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել բնագավառում ծագած մի շարք խնդիրներ:

2. Քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրանքի արտադրության ծավալի աճին, ներմուծվող արտադրանքը տեղական արտադրանքով փոխարինելուն, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ինչը պահանջում է պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառում:

3. Գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի տեղական արտադրության ծավալներն ապահովում են ինքնաբավության ցածր մակարդակ, և առաջնահերթ խնդիրը դրանց ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացումն ու ինքնաբավության մակարդակի հետագա բարձրացումն է, մասնավորապես, դա վերաբերում է յուղատու մշակաբույսերին՝ արևածաղիկ, հլածուկ, սոյա, կտավատ (այսուհետ՝ յուղատու մշակաբույսեր), ընդդեմ մշակաբույսերին՝ ոլոռ, սիսեռ, լոբի (այսուհետ՝ ընդդեմ մշակաբույսեր), բանջարեղենին՝ պոմիդոր, պղպեղ, բադրիջան, սոխ, սխտոր (այսուհետ՝ բանջարեղեն), եգիպտացորենին, հնդկացորենին, առվույտին և ծխախոտին: Նշված մշակաբույսերի եկամտաբերությունը տարեցտարի նվազում է՝ կատարվող ծախսերի ավելացման և բերքատվության անկման պատճառով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հողօգտագործողներին տրամադրվող պետական աջակցության շարունակական ծրագրերը նպաստում են տևականորեն չմշակված վարելահողերի շրջանառության մեջ ներգրավմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկական միջոցառումների բարելավմանը, ցանքատարածությունների, համախառն բերքի, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և տնտեսական աճի ապահովմանը:

4. Առաջնահերթ խնդիր է սեփական արտադրության հաշվին տեղական վերամշակող ընկերությունների կողմից մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը, ինչպես նաև անասնակերով ապահովվածության մակարդակի բարձրացումը, որը բխում է նաև հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի լիարժեք օգտագործման անհրաժեշտությունից:

5. Բուսաբուծության բնագավառի ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, բանջարեղենի, եգիպտացորենի, հնդկացորենի, առվույտի և ծխախոտի ցանքատարածությունների ավելացման ու ագրոտեխնիկական միջոցառումների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է հողօգտագործողներին առաջնահերթ ապահովել բարձր վերարտադրություն և բերքատվություն ապահովող սերմերով, հանքային պարարտանյութերով, ինկույանտով (ախտահանիչով), ինչպես նաև այդ մշակաբույսերից ստացված բերքի մթերման դիմաց լրավճարների տրամադրման միջոցով ապահովել բերքի իրացման կայուն շուկաներ:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում զարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության խթանման 2017 թվականի ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2017 թվականին զարնանացան որոշ մշակաբույսերի արտադրության խթանմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՆԵՐԸ

7. Գյուղատնտեսության բնագավառում չափազանց կարևոր է ցանքաշրջանառության կիրառումը, ցանքատարածքների կառուցվածքի բարելավումը և անասնապահության զարգացումը: Ցանքաշրջանառության մեջ ճիշտ ընտրված մշակաբույսերի մշակությունը բարելավում է հողի՝ ֆիտոսանիտարական վիճակը, պահպանում էռոզիայից, ավելացնում օրգանական նյութերի քանակը և բարելավում ֆիզիկական հատկությունները: Այդ առումով յուղատու և ընդդեմ մշակաբույսերի, բանջարեղենի, եգիպտացորենի, հնդկացորենի, առվույտի և ծխախոտի մշակությունը կարևորվում է ցանքաշրջանառության լավագույն բաղադրիչ լինելու, պարենային որոշ մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման, ինչպես նաև անասնակերների կայուն բազայի ստեղծման տեսանկյունից:

8. Ծրագրի նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում այդ մշակաբույսերի ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների ավելացումը և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամտաբերության մակարդակի բարձրացմանը նպաստելը:

9. Ծրագրի խնդիրներն են՝

- 1) գյուղատնտեսական նշանակության տարածքների արդյունավետ օգտագործման համար հնարավորությունների ստեղծում.
- 2) գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում և բնակչության աշխատունակ հատվածի համար լիարժեք զբաղվածության ապահովում.
- 3) վերամշակող ընկերությունների համար անհրաժեշտ քանակությամբ հումքի ապահովում:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

10. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- 1) յուղատու և ընդդեղն մշակաբույսերի, եգիպտացորենի, հնդկացորենի և առվույտի սերմերի, հանքային պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) ձեռքբերում ու անհատույց (բացառությամբ սիսեռի և լոբու սերմերի) տրամադրում.
- 2) բանջարեղենի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.
- 3) ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում:

11. Ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված պետական, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրի իրականացման գործընթացը.

2) տեղական ինքնակառավարման մարմինները, հիմք ընդունելով յուղատու և ընդդեղն մշակաբույսերի, բանջարեղենի, եգիպտացորենի, հնդկացորենի և առվույտի մշակությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հողօգտագործողների դիմումները, վարելահողերի նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները, շրջանների վարչակազմերի սահմանած ժամկետում շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի և վկայականի համարը, մշակաբույսերը և դրանց մշակության համար նախատեսված տարածքների մակերեսները: Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարելահողերի վարձակալները փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը մինչև 2017 թվականի մայիսի 15-ը (բանջարեղեն մշակողների համար՝ մինչև օգոստոսի 1-ը) ընդհանրացնում և նախարարություն են ներկայացնում Ծրագրի 11-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկությունները:

12. Պետական աջակցության տրամադրման հիմք են հանդիսանում Ծրագրի 11-րդ կետի 3-րդ ենթակետում և 13-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունում նշված տեղեկությունները:

13. Պետական աջակցությունը տրամադրվում է՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում յուղատու և ընդդեղն մշակաբույսեր, եգիպտացորեն, հնդկացորեն և առվույտ մշակելու համար՝ 1 հեկտարի համար սահմանված համապատասխան քանակությամբ սերմի, հանքային պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) տեսքով, անհատույց, բացառությամբ սիսեռի և լոբու սերմերի (տրամադրվող սերմի, հանքային պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) սահմանված քանակները ներկայացված են N 1 աղյուսակում):

Ծրագրում ընդգրկված մշակաբույսերի մշակության համար անհրաժեշտ յուղատու մշակաբույսերի, ոլոռի, եգիպտացորենի (Պիոներ) սերմերը (հանրապետության տարածքում նախապես փորձարկված) և ինոկուլյանտը (ախտահանիչը) ձեռք կբերվեն նախարարության կողմից և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով անհատույց կտրամադրվեն հողօգտագործողներին՝ նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա:

Հնդկացորենի, առվույտի, սիսեռի, լոբու և եգիպտացորենի (Գրասնողարսկայա 385) սերմերն ու հանքային պարարտանյութերը ձեռք կբերվեն հիմնադրամի միջոցով և անհատույց (բացառությամբ սիսեռի և լոբու) կտրամադրվեն հողօգտագործողներին՝ նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա:

Պետական աջակցություն տրամադրելիս առաջնահերթությունը կտրվի այն հողօգտագործողներին, որոնք մասնակցել են երկրագործության դասընթացներին ու ստացել առաջին կարգի դրակավորման հավաստագրեր, չունեն նախկինում մատակարարված ռոտզման ջրի դիմաց չմարված պարտավորություններ և ունեն 2017 թվականին ռոտզման ջրի մատակարարման համար կնքված պայմանագիր: Հնդկացորեն մշակողներին աջակցություն կտրամադրվի մինչև 5 հեկտար ներառյալ մշակության դեպքում՝ առանց սահմանափակումների, 5 հեկտարից ավել մշակելու դեպքում՝ սերմը հողօգտագործողին կտրամադրվի սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող վարելահողերի 25 տոկոսի չափով (բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ և Մատաղիս համայնքների հողօգտագործողներին), սակայն ոչ ավել, քան 100 հեկտար: 10 հեկտար և ավելի եգիպտացորեն մշակողներին, ներկայացված հայտի 20 տոկոսի չափով կտրամադրվի Գրասնողարսկայա 385 տրտի սերմը (սիլոսի համար), մնացածը կտրամադրվի Պիոներ տեսակի սերմից: Սիսեռի և լոբու սերմերը հողօգտագործողներին կտրամադրվի արժեքի 50 տոկոսի սուբսիդավորմամբ՝ առանց սահմանափակումների:

Պետական աջակցության տրամադրման (սերմ, պարարտանյութ և ինոկուլյանտ (ախտահանիչ)) պարտադիր պայման է շրջանի վարչակազմի կամ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը հողատարածքը ցանքսին պատրաստ լինելու մասին:

Ազդոտեխնիկական ժամկետներում տրամադրված սերմերի, հանքային պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) ոչ նպատակային օգտագործման դեպքում տրամադրված սերմերի, հանքային պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե:

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում բանջարեղեն մշակելու համար՝ 1 հեկտարի դիմաց 200 000 ՀՀ դրամ՝ միանվագ գումարի կամ այդ գումարին համարժեք քանակությամբ ապրանքանյութերի տեսքով (մեկ հողակտորի մակերեսը ոչ պակաս, քան 0,5 հեկտար):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղանտեսության նախարարի հրամանով սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունների ուսումնասիրման, բանջարեղենի մշակության համար տրամադրված ֆինանսական միջոցների կամ ապրանքանյութերի նպատակային օգտագործման և իրականացված աշխատանքների հետագա վերահսկման նպատակով ստեղծվում է հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

Հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո տասնօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերը, ընդհանրացնում և հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած բանջարեղեն մշակելու համար դիմած հողօգտագործողների ցանկը, նշելով հողօգտագործողի տվյալները և տրամադրվող ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի չափը, պետական աջակցության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով:

Աջակցությունն անհատույց կտրամադրվի հիմնադրամի միջոցով՝ հանձնաժողովի կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա:

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում մշակած ծխախոտից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց տրամադրվում է լրավճար՝ 1 կիլոգրամի դիմաց 10 ՀՀ դրամ գումարի չափով՝ հետևյալ ձևով՝

ա. լրավճարը տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող ընկերություններին մթերված բերքի դիմաց,

բ. մթերող ըկերությունները 2017 թվականի ծխախոտի բերքի (հումքի) մթերման գործընթացն ավարտելուց հետո տեղեկություններ են ներկայացնում նախարարություն՝ նշելով բերք հանձնած հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, մթերված բերքի քանակը:

գ. նախարարությունը սույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունում նշված տեղեկությունները ստանալուց հետո, տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հայտ՝ նշելով մթերող ընկերությունների անվանումները և վճարման ենթակա գումարները,

դ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունը վերը նշված հայտը ստանալուց հետո գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության ծրագրերի խթանման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցներից սահմանված կարգով հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցները,

ե. մթերող ըկերությունները համապատասխան ֆինանսական միջոցները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հողօգտագործողներին են վճարում ծխախոտի բերքի իրացման (մթերման) դիմաց սահմանված լրավճարը:

Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով «Գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության ծրագրերի խթանում» միջոցառմամբ նախատեսված միջոցներով:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

14. Ծրագրի իրականացումից նախատեսվում է յուղատու մշակաբույսերի ցանքատարածքները հասցնել 4698 հեկտարի, այդ թվում արևածաղիկ՝ 3184 (ներառյալ պահեստում առկա սերմը) հեկտար, հլածուկ՝ 500 հեկտար, սոյա՝ 436 հեկտար, կտավատը՝ 578, ընդդեղեն մշակաբույսերինը՝ 257 հեկտարի, այդ թվում ոլոռ՝ 70 հեկտար, սիսեռ՝ 167 հեկտար, լոբի՝ 20 հեկտար, առվույտը՝ 149 հեկտարի, հնդկացորենինը՝ 2308 հեկտարի, եգիպտացորենինը՝ 3075 (ներառյալ պահեստում առկա սերմը) հեկտարի, իսկ վերամշակող ընկերություններում հողօգտագործողներից մթերել շուրջ 3500 տոննա ծխախոտի հումք: Ֆինանսական միջոցները կամ դրանց համարժեք ապրանքանյութերը կտրամադրվեն 400 հեկտար բանջարեղենի մշակության համար, այդ թվում՝ 200 հեկտար սոխ:

15. Յուղատու և ընդդեղեն մշակաբույսերը, հնդկացորենը և բանջարեղենը հումք են հանդիսանում վերամշակող ընկերությունների համար: Յուղատու մշակաբույսերի վերամշակումից ստացված ձեթը, ընդդեղեն մշակաբույսերից՝ հատիկը, հնդկացորենից՝ հնդկաձավարը և բանջարեղենից՝ պահածոները հանդիսանում են առաջին անհրաժեշտության պարենամթերք և ունեն մեծ դեր ու նշանակություն մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար: Առվույտից և եգիպտացորենից ստացվում է անասնակեր, որը կնպաստի անասնաբուծության զարգացմանը:

Սույն Ծրագրի շրջանակներում տրամադրված պետական աջակցության միջոցով ստացված բերքի մթերումը (իրացումը) պետական աջակցության ծրագրի մաս չի կազմում:

Աղյուսակ N 1

Տրամադրվող սերմի, հանքային պարարտանյութերի և ինոկուլյանտի (ախտահանիչի) սահմանված քանակները

Հ/Հ	Մշակաբույսը	Տրամադրվող սերմի քանակը (կգ)	Տրամադրվող ինոկուլյանտի (ախտահանիչի) քանակը (մլ)	Տրամադրվող պարարտանյութի քանակը (կգ)	
				ֆոսֆոր	կալիում
1	Արևածաղիկ	5		70	120
2	Հլածուկ	6		70	60
3	Սոյա	55	115	70	60
4	Կտավատ	45		70	60
5	Հնդկացորեն	65			
6	Առվույտ	22			
7	Ոլոռ	200			
8	Սիսեռ	90			
9	Լոբի	100			
10	Եգիպտացորեն (Պիոներ)	16			
11	Եգիպտացորեն (Կրասնոդարսկայա 385)	23			

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԱՐԱՆԱՅԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՑՄԵՐԻ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Նախատեսվում է մշակել (հա)	Ցանցի տրամ (կգ/հա)	Համախառն բերք (տ)	Մերմի պահանջը (կգ)	Մերմի արժեքը (ՀՀ դրամ)	Անաստույց դրամական միջոցների կամ սպորանջամբների տրամադրում (ՀՀ դրամ)	Լրավճար մթերված բերքի դիմաց (ՀՀ դրամ)	Ինոկուլյանտի (ախտանախիչի) արժեքը (ՀՀ դրամ)	Պարարտանյութի արժեքը (ՀՀ դրամ)	որից՝		Ընդամենը ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)
											ֆոսֆոր	կալիում	
1	Հնդկացորեն	2308	65		150000,0	81000000							81000000
2	Արևածաղիկ	3000	5		15000,0	49500000				84694400	31203200	53491200	134194400
3	Հլածուկ	500	6		3000,0	9300000				9100000	4900000	4200000	18400000
4	Սոյա	436	55		24000,0	26399998			1250000	7935200	4272800	3662400	35585197
5	Կտավատ	578	45		26000,0	25999997				10519600	5664400	4855200	36519597
6	Առվույտ	149	22		3278,0	9834000							9834000
7	Ոլոռ	70	200		14000,0	5180000							5180000
8	Սիսեռ (խոշորասերմ)	167	90		15000,0	17249993							17249993
9	Լոբի	20	100		2000,0	1500000							1500000
10	Եգիպտացորեն (Պիոներ)	2563	16		41000,0	135300000							135300000
11	Եգիպտացորեն (Կրասնոդարսկայա 385)	450	23		10350,0	9315000							9315000
12	Ծխախոտ			3500				35000000					35000000
13	Բանջարեղեն	400					80000000						80000000
ԸՆԴԱՄԵՆԸ		10640				370578987	80000000	35000000	1250000	112249200	46040400	66208800	599078187

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 279-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 608-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ջ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի «Իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությանն արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» N 608-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրից, 1-ին և 2-րդ կետերից, ինչպես նաև որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետից հանել «, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման» բառերը.

2) որոշման նախաբանի ««Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ» բառերը փոխարինել ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

4) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 10-րդ կետի «և էկոնոմիկայի» բառերը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՑԻԱԿԱՆ
ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ**

Հ/Հ	Ծառայության տեսակը	Ծառայության մատուցման ժամկետը	Վճարի չափը (ՀՀ դրամ)
1	2	3	4
1.	Հասարակական միավորումների (բացառությամբ կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների), հիմնադրամների, ոչ առևտրային իրավաբանական անձանց միությունների, արհեստակցական միությունների, գործատուների միությունների պետական գրանցում (ներառյալ փոփոխությունների գրանցումը, բացառությամբ գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների փոփոխության) կամ գրանցման գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքեր (առաջին գրավոր մերժման դեպքում մեկ ամսվա ընթացքում մերժման համար հիմք հանդիսացող պատճառները վերացնելու դեպքում պետական գրանցումն իրականացվում է վճարված գումարին համապատասխան ժամկետներում)	երեք աշխատանքային օրվա ընթացքում	20 000
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	10 000
2.	Հասարակական միավորումների (բացառությամբ կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների), հիմնադրամների, ոչ առևտրային իրավաբանական անձանց միությունների, արհեստակցական միությունների, գործատուների միությունների գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների փոփոխությունների պետական գրանցում կամ գրանցման գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքերը (առաջին գրավոր մերժման դեպքում մեկ ամսվա ընթացքում մերժման համար հիմք հանդիսացող պատճառները վերացնելու դեպքում պետական գրանցումը կամ հաշվառումն իրականացվում է վճարված գումարին համապատասխան ժամկետներում)	մեկ աշխատանքային օրվա ընթացքում	5 000
3.	Վերակազմակերպումների պետական գրանցում կամ գրանցման գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքերը (առաջին գրավոր մերժման դեպքում մեկ ամսվա ընթացքում մերժման համար հիմք հանդիսացող պատճառները վերացնելու դեպքում պետական գրանցումն իրականացվում է վճարված գումարին համապատասխան ժամկետներում)	երկու աշխատանքային օրվա ընթացքում	20 000
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	10 000
4.	Սույն ցանկի 1-ին կետում չնշված ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների), ինչպես նաև առևտրային կազմակերպությունների ոչ նմուշային կանոնադրությունների դեպքում՝ պետական գրանցում կամ գրանցման գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքերը: (առաջին գրավոր մերժման դեպքում մեկ ամսվա ընթացքում մերժման համար հիմք հանդիսացող պատճառները վերացնելու դեպքում պետական գրանցումը կամ հաշվառումն իրականացվում է վճարված գումարին համապատասխան ժամկետում)	մեկ աշխատանքային օրվա ընթացքում	20 000
5.	Առևտրային կազմակերպությունների պետական գրանցման ժամանակ նմուշային կանոնադրություն տրամադրելու դեպքում կանոնադրության մեկից ավելի յուրաքանչյուր տարբերակի տրամադրում թղթային եղանակով (չհաշված իրավաբանական		1 000

	անձանց պետական ռեզիստրի գործակալությունում պահվող տարբերակը)		
6.	Իրավաբանական անձանց պետական գրանցման ժամանակ երկուսից ավելի ոչ նմուշային կանոնադրություն ներկայացնելու դեպքում թղթային եղանակով ներկայացված յուրաքանչյուր կանոնադրության ուսումնասիրություն և հաստատում		2 000
7.	Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում պարունակվող տեղեկությունների մասին թղթային եղանակով տեղեկատվության տրամադրում (բացառությամբ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի)	նույն աշխատանքային օրվա ընթացքում	3 000
8.	Իրավաբանական անձի կանոնադրության պատճենի տրամադրում (մեկ օրինակ)՝ թղթային եղանակով (յուրաքանչյուր կանոնադրության համար՝ ներառյալ փոփոխությունները)	մեկ աշխատանքային օրվա ընթացքում	2 000
9.	Նախքան պետական գրանցման համար դիմում ներկայացնելը՝ պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի կազմում.		
	1) միաձուլում՝		
	ա. երկու կազմակերպությունների միաձուլման փաստաթղթերի կազմում	տասն աշխատանքային օր	25 000
	բ. յուրաքանչյուր լրացուցիչ կազմակերպության դեպքում	ևս հինգ աշխատանքային օր	8 000
	2) միացում՝		
	ա. երկու կազմակերպությունների միացման փաստաթղթերի կազմում	յոթ աշխատանքային օր	17 000
	բ. յուրաքանչյուր լրացուցիչ կազմակերպության դեպքում	ևս երեք աշխատանքային օր	8 000
	3) բաժանում՝		
	ա. կազմակերպության՝ երկու կազմակերպությունների բաժանման փաստաթղթերի կազմում	տասն աշխատանքային օր	20 000
	բ. յուրաքանչյուր լրացուցիչ կազմակերպության դեպքում	ևս հինգ աշխատանքային օր	8 000
	4) առանձնացում՝		
	ա. կազմակերպությունից մեկ կազմակերպության առանձնացման փաստաթղթերի կազմում	յոթ աշխատանքային օր	20 000
	բ. յուրաքանչյուր լրացուցիչ կազմակերպության դեպքում	ևս երեք աշխատանքային օր	8 000
	5) վերակազմավորում՝		
	կազմակերպության վերակազմավորման փաստաթղթերի կազմում	յոթ աշխատանքային օր	15 000
	6) առևտրային կազմակերպությունների ստեղծման, կանոնադրության, մասնակիցների և գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության փաստաթղթերի կազմում	չորս աշխատանքային օր	5 000
	7) ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների, համաժողովուրդների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների) ստեղծման, կանոնադրության և գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության փաստաթղթերի կազմում	հինգ աշխատանքային օր	10 000
	8) ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման փաստաթղթերի կազմում	չորս աշխատանքային օր	5 000
	9) ռեզիդենտ համարվող ոչ առևտրային կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման փաստաթղթերի կազմում	հինգ աշխատանքային օր	6 000
	10) իրավաբանական անձանց գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության փաստաթղթերի կազմում	երեք աշխատանքային օր	3 000
10.	Ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքի տրամադրում	մեկ աշխատանքային օրվա ընթացքում	10 000
		երկու աշխատանքային օր	7 000

		քային օրվա ընթացքում	
11.	Ընտանեկան կարգավիճակի մասին երկլեզու տեղեկանքի տրամադրում (հայերեն-անգլերեն կամ հայերեն-ռուսերեն)		2 000
12.	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մեջ ուղղման, փոփոխման, լրացման մասին եզրակացության հաստատում կամ մերժում	երեք աշխատանքային օրվա ընթացքում	20 000
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	10 000
13.	Անվան, հայրանվան, ազգանվան փոխման մասին եզրակացության հաստատում կամ մերժում	երեք աշխատանքային օրվա ընթացքում	20 000
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	10 000
14.	Քաղաքացիական կացության ակտի գրանցման վերականգնման մասին եզրակացության հաստատում կամ մերժում	երեք աշխատանքային օրվա ընթացքում	20 000
		հինգ աշխատանքային օրվա ընթացքում	10 000
15.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների՝ միմյանց կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության գրանցման մասին թույլտվության տրամադրում	մեկից երկու աշխատանքային օրվա ընթացքում. օրը որոշվում է դիմողների ցանկությամբ	60 000
		երեքից մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում. օրը որոշվում է դիմողների ցանկությամբ	40 000
		յոթերորդ աշխատանքային օրը	20 000
16.	Ամուսնության կամ ամուսնալուծության ակտային գրանցման առկայության կամ բացակայության մասին տեղեկանքի տրամադրում	մեկ աշխատանքային օրվա ընթացքում	2 000
17.	Ամուսնացող անձանց ցանկությամբ ամուսնության պետական գրանցում քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս		30 000
18.	Ամուսնացող անձանց ցանկությամբ գրանցված ամուսնության վկայականը ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին հանդիսավոր պայմաններում ամուսինների տրամադրելու համար՝		
	1) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս		30 000
	2) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրում		20 000

»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 280-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ս շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) Արցախի պետական համալսարանի 2017-2018 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտությունների, անվճար և վճարովի ուսուցման տեղերի ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա և հետակա ուսուցման մագիստրոսի կրթական ծրագրով տեղերն՝ ըստ մասնագիտությունների՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՆԿ
ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ
ԱՄՊԻՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար ուսուցման տեղերը	Վճարովի ուսուցման տեղերը
Ա.01.01	Մաթեմատիկական անալիզ	1	1
Ա. 04.07	Կոնդենսացված վիճակի ֆիզիկա	1	-
Է.00.01	Հայոց պատմություն	1	1
Է.00.02	Համաշխարհային պատմություն	1	1
Ը.00.02	Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում	1	-
Ը.00.03	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	1	1
Ը.00.05	Հաշվապահական հաշվառում և վիճակագրություն	1	1
Ժ.01.02	Նորագույն շրջանի հայ գրականություն	1	-
Ժ.01.06	Ժուռնալիստիկա	1	-
Ժ.02.02	Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն	1	-
Ժ.02.07	Գերմանական լեզուներ	1	-
ԺԲ.00.03	Մասնավոր իրավունք (քաղաքացիական)	1	1
ԺԲ.00.06	Միջազգային իրավունք	1	-
ԺԳ.00.01	Մանկավարժության տեսություն և պատմություն	1	1
ԺԹ.00.05	Տարիքային և մանկավարժական հոգեբանություն	1	1
ԻԳ.00.01	Քաղաքական գիտության պատմություն և տեսություն	1	-
ԻԳ.00.04	Միջազգային հարաբերություններ	1	-
ԻԴ.00.02	Տնտեսական, սոցիալական և քաղաքական աշխարհագրություն	1	1
ԸՆԴԱՄԵԸ		18	9

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՑԱՆԿ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ 2017 -2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՆԵՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Առկա		Հեռակա
		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
011301.00.7	Ընդհանուր մանկավարժություն			
	011301.01.7 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	5	10	5
011401.00.7	Մասնագիտական մանկավարժություն			
	011401.04.7 Ֆիզիկա	4	4	-
	011401.05.7 Մաթեմատիկա	5	5	-
	011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	3	7	-
	011401.11.7 Կերպարվեստ	3	5	-
022201.00.7	Պատմություն			
	022201.02.7 Հայոց պատմություն	5	7	-
023101.00.7	Հայոց լեզու և գրականություն			
	023101.03.7 Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն	5	5	-
	023101.04.7 Հայ գրականության պատմություն	5	5	-
023102.00.7	Օտար լեզու և գրականություն			
	023102.08.7 Ռուսաց լեզու	3	5	-
	023102.09.7 Անգլերեն լեզու	7	13	-
	023102.15.7 Ռուս գրականություն	3	5	-
031201.00.7	Քաղաքագիտություն			
	031201.01.7 Քաղաքագիտություն	5	7	-
031301.00.7	Հոգեբանություն			
	031301.01.7 Հոգեբանություն	5	10	5
032101.00.7	Լրագրություն			
	032101.01.7 Լրագրություն	4	7	-
041101.00.7	Հաշվապահական հաշվառում և հարկում			

	041101.02.7 Հաշվապահական հաշվառում և աուդիտ	5	5	5
041201.00.7	Ֆինանսներ			
	041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	5	10	5
041301.00.7	Կառավարում			
	041301.01.7 Կառավարում	5	10	-
042101.00.7	Իրավագիտություն			
	042101.02.7 Սահմանադրական իրավունք, պետություն և իրավունքի տեսություն	5	7	-
	042101.03.7 Քաղաքացիական իրավունք և դատավարություն	5	7	-
	042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն	5	7	5
051101.00.7	Կենսաբանություն			
	051101.01.7 Կենսաբանություն	4	6	5
	051101.05.7 Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա	4	6	5
053101.00.7	Քիմիա			
	053101.02.7 Ղեղազործական քիմիա	5	5	-
054201.00.7	Աշխարհագրություն			
	054201.01.7 Աշխարհագրություն	5	5	-
061101.00.7	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)			
	061101.02.7 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	5	7	-
	Պահուստային տեղեր	15	10	10
	ԸՆԴԱՄԵՆԸ	130	180	45

2.«ՇՈՒՇԵՒԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Առկա		Հեռակա
		Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
021201.00.7	Դիզայն			
	021201.01.7 Դիզայն	2	5	-
041801.00.7	Ագրոբիզնես			
	041801.01.7 Ագրոբիզնես	2	5	5
061105.00.7	Տեղեկատվական տեխնոլոգիաներ			
	061105.01.7 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	2	5	5
071301.00.7	Էներգետիկա			
	071301.03.7 Էլեկտրաէներգետիկա	2	5	5
071601.00.7	Տրանսպորտային համակարգեր			
	071601.03.7 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	2	5	5
071602.00.7	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ			
	071602.01.7 Գյուղատնտեսության մեքենայացում	2	5	5

072101.00.7	Պարենամթերքի տեխնոլոգիա			
	072101.01.7 Պարենամթերքի տեխնոլոգիա	2	5	-
073101.00.7	Ճարտարապետություն			
	073101.01.7 Ճարտարապետություն	2	5	-
073102.00.7	Քաղաքային տնտեսություն			
	073102.01.7 Քաղաքային տնտեսություն	2	5	-
073201.00.7	Շինարարություն			
	073201.01.7 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	2	5	5
	073201.02.7 Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիանների արտադրություն	2	5	5
	073201.03.7 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	2	5	5
	073201.09.7 Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում	2	5	-
081101.00.7	Ագրոնոմիա			
	081101.01.7 Ագրոնոմիա	2	5	-
084101.00.7	Անասնաբուծություն			
	084101.01.7 Անասնաբուծություն	2	5	5
	Պահուստային տեղեր	5		
	ԸՆԴԱՄԵՆԸ	35	75	45

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 281-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒԹՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒԹՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱՆԱԿՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Մահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափը որոշում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N 81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա անվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) 10 տոկոսը (առնվազն մեկ տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիներին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ց Ա Ն Կ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ` ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

**1.ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
 1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
011201.00.6	Նախադպրոցական մանկավարժություն		
	011201.01.6 Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	7	18
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն		
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	7	18
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն		
	011401.01.6 Կենսաբանություն	7	13
	011401.02.6 Քիմիա	7	13
	011401.03.6 Աշխարհագրություն	10	10
	011401.04.6 Ֆիզիկա	10	10
	011401.05.6 Մաթեմատիկա	10	15
	011401.06.6 Ինֆորմատիկա	10	15
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	7	18
	011401.11.6 Կերպարվեստ	5	10
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	7	18
	011401.18.6 Պատմություն	10	15
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	10	20
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	7	18
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	10	20
023201.00.6	Լեզվաբանություն		
	023201.01.6 Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)	7	18
031101.00.6	Տնտեսագիտություն		
	031101.01.6 Տնտեսագիտություն	7	18
031201.00.6	Քաղաքագիտություն		
	031201.01.6 Քաղաքագիտություն	5	15
031301.00.6	Հոգեբանություն		
	031301.01.6 Հոգեբանություն	5	20
032101.00.6	Լրագրություն		
	032101.01.6 Լրագրություն	5	20
041101.00.6	Հաշվապահական հաշվառում և հարկում		

	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	5	20
041201.00.6	Ֆինանսներ		
	041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	7	23
042101.00.6	Իրավագիտություն		
	042101.01.6 Իրավագիտություն	10	20
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ		
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	10	20
101501.00.6	Զբոսաշրջություն		
	101501.01.6 Զբոսաշրջություն	5	15
	Պահուստային տեղեր	10	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	200	420

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն	
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	25
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն	
	011401.01.6 Կենսաբանություն	25
	011401.03.6 Աշխարհագրություն	20
	011401.04.6 Ֆիզիկա	20
	011401.05.6 Մաթեմատիկա	20
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	30
	011401.18.6 Պատմություն	25
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	25
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	25
031101.00.6	Տնտեսագիտություն	
	031101.01.6 Տնտեսագիտություն	25
041101.00.6	Հաշվապահական հաշվառում և հարկում	
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	25
042101.00.6	Իրավագիտություն	
	042101.01.6 Իրավագիտություն	25
053101.00.6	Քիմիա	
	053101.02.6 Դեղագործական քիմիա	25
	ԸՆԴԱՄԵՆԸ	315

2.«ՇՈՒՇԻՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
021201.00.6	Դիզայն		
	021201.01.6 Դիզայն	5	15
041801.00.6	Ագրոքիզնես		
	041801.01.6 Ագրոքիզնես	10	10
061105.00.6	Տեղեկատվական տեխնոլոգիաներ		
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	10	10
071301.00.6	Էներգետիկա		
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	5	15
071403.00.6	Ռադիոտեխնիկա և կապ		
	071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ	5	15
071601.00.6	Տրանսպորտային համակարգեր		

	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	10	10
071602.00.6	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ		
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	10	10
072101.00.6	Պարենամթերքի տեխնոլոգիա		
	072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	5	15
073101.00.6	Ճարտարապետություն		
	073101.01.6 Ճարտարապետություն	10	10
073102.00.6	Քաղաքային տնտեսություն		
	073102.01.6 Քաղաքային տնտեսություն	5	15
073201.00.6	Շինարարություն		
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	10	10
	073201.03.6 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	5	15
081101.00.6	Ագրոնոմիա		
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	10	10
084101.00.6	Անասնաբուծություն		
	084101.01.6 Անասնաբուծություն	10	10
	Պահուստային տեղեր	10	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	120	170

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
041801.00.6	Ագրոբիզնես	
	041801.01.6 Ագրոբիզնես	15
061103.00.6	Համակարգչային ճարտարագիտություն	
	061103.01.6 Համակարգչային ճարտարագիտություն	15
071601.00.6	Տրանսպորտային համակարգեր	
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	15
071602.00.6	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	15
073201.00.6	Շինարարություն	
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	15
081101.00.6	Ագրոնոմիա	
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	15
	ԸՆԴԱՄԵՆԸ	90

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
		Հիմնական կրթությամբ	Հիմնական կրթությամբ
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ	10	10
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում	10	10

2914	Ներքին ջեռուցման և օդափոխման համակարգերի սանիտարատեխնիկական սարքավորումների և օդափոխման համակարգերի տեղակայում և շահագործում	10	10
2916	Քաղաքաշինական կադաստր	10	10
3102	Գյուղատնտեսագիտություն	10	10
3104	Անասնաբուժություն	15	5
3106	Գյուղատնտեսության մեքենայացում	15	5
	Պահուստային տեղեր	10	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	90	60

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 282-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 17-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1-Ն որոշման N 1 հավելվածի 45-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացվելիք 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների և պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով տեղերի ցանկին՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ց Ա Ն Կ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
 ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
 ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՆԻՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ
 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ
 ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ)
 ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒ ԱՆԸՆԴՅԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԵՂԵՐԻ**

Դասիչը	Բուիք, մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը
<i>ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</i>			
031301.00.6	Հոգեբանություն		
	031301.01.6 Հոգեբանություն	1	1
031501.00.6	Մշակութաբանություն		
	031501.01.6 Մշակութաբանություն	1	-
031801.00.6	Միջազգային հարաբերություններ		
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ	2	2
054101.00.6	Երկրաբանություն		
	054101.01.6 Երկրաբանություն	1	
054201.00.6	Աշխարհագրություն		
	054201.02.6 Քարտեզագրություն և կադաստրային գործ	1	
056802.00.6	Ֆինանսական մաթեմատիկա		
	056802.01.6 Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ	7	3
<i>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</i>			
061901.00.6	Տեղեկատվական անվտանգություն		
	061901.01.6 Տեղեկատվական անվտանգություն	1	1
071302.00.6	Էլեկտրատեխնիկա		
	071302.02.6 Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ	1	
071403.00.6	Ռադիոտեխնիկա և կապ		
	071403.02.6 Ռադիոտեխնիկա	1	
	071403.03.6 Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ	4	1
<i>ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ</i>			
052201.00.6	Բնապահպանություն և բնօգտագործում		
	052201.01.6 Բնապահպանություն և բնօգտագործում	1	
073102.00.6	Քաղաքային տնտեսություն		
	073102.02.6 Ջերմագազամատակարարում և օդափոխություն	1	
073201.00.6	Շինարարություն		

	073201.08.6 Շենքերի նախագծում	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ	3	
Խ. ԱԲՈՎԶԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՆՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն		
	011301.03.6 Սոցիալական մանկավարժություն	1	
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն		
	011401.14.6 Պարարվեստ	1	1
092301.00.6	Սոցիալական աշխատանք		
	092301.01.6 Սոցիալական աշխատանք	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ	3	1
ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ			
021502.00.6	Կատարողական արվեստ		
	021502.02.6 Դիրիժորություն	1	1
	021502.04.6 Վոկալ արվեստ		
	-ակադեմիական	2	1
	-ժողովրդական	2	1
	-Էստրադային	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ	6	3
ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ			
021103.00.6	Կինոարվեստ		
	021103.01.6 Կինոարվեստ	1	
021504.00.6	Պարարվեստի ռեժիսուրա		
	021504.01.6 Պարարվեստի ռեժիսուրա	2	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	3	1
ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			
023201.00.6	Լեզվաբանություն		
	023201.04.6 Անգլերեն լեզու	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ	1	
ԵՐԵՎԱՆԻ Ս. ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			
091201.00.7	Բուժական գործ		
	091201.01.7 Բուժական գործ	17	5
	ԸՆԴԱՄԵՆԸ	17	5
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱԿՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ			
101401.00.6	Սպորտ		
	101401.01.6 Սպորտ	2	
	ԸՆԴԱՄԵՆԸ	2	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			
072101.00.6	Պարենամաթերաբանական տեխնոլոգիա		
	072101.04.6 Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա	1	
	072101.09.6 Գյուղատնտեսական հումքի և պարենամաթերաբանական արտադրանքների արտադրության, ստանդարտացում և սերտիֆիկացում	1	
072301.00.6	Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա		
	072301.02.6 Կաշվի և մորթու արտադրանքի տեխնոլոգիա	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ	3	
ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ (ՄԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			
Ռուսական բաժանմունք			
11.03.04	Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա	1	
41.03.01	Արտասահմանյան տարածաշրջանագիտություն (ռեզիդենսագիտություն)	1	

42.03.01	Գովազդ և հասարակության հետ կապեր	1	
43.03.02	Զբոսաշրջություն	1	
	<i>ԸՆԴԱՄԵՆԸ</i>	<i>4</i>	
	<i>ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՏԵՂԵՐ</i>	<i>7</i>	
	<i>ԸՆԴՀԱՆՈՒՐԸ</i>	<i>60</i>	<i>14</i>

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 283-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՍԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ:

3. Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Մույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը:

5. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ց Ա Ն Կ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
 (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
 ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝
 ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
 ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ)
 ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ
 ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ
 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ**

**1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ
 ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈՒԼԵԶ**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը		Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը	
		Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ	Հիմնական կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ
0402	Մանկաբարձական գործ	5	2	25	28
0405	Դեղագործություն	-	2	-	28
0406	Քույրական գործ	5	2	25	28
0418	Բուժական գործ զինված ուժերում	5	-	25	-
	Պահուստային տեղեր	6	3	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	21	9	75	84

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇԿԱԿԱՆ ՔՈՒԼԵԶ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը
0501	Գործիքային կատարողական արվեստ այդ թվում՝	16	7
	դաշնամուր	6	4
	լարային գործիքներ	2	-
	փողային գործիքներ	3	1
	ժողովրդական գործիքներ	5	2
0502	Երգեցողություն	3	6
0503	Երգչախմբավարություն	2	1
0504	Երաժշտության տեսություն	1	1
0505	Էստրադային երաժշտարվեստ	2	5
	Պահուստային տեղեր	4	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	28	20

**3. ՇՈՒՇԻԻ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈՒԼԵԶ
 3.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) տեղերը
--------	--------------------------	---	--

		Հիմնական կրթությամբ	Հիմնական կրթությամբ
0210	Թարգմանություն և սպասարկման կազմակերպում	5	10
0514	Դիզայն ըստ ճյուղերի	10	5
0515	Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ	10	5
0518	Մոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն	5	10
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	5	10
	Պահուստային տեղեր	5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	40	40

3.2. ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի գեղչի կիրառման (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթությամբ)
0517	Գրադարանային գործ	15
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ	15
	ԸՆԴԱՄԵՆԸ	30

4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը
0506	Դասական պար	10
	Պարարվեստ (ժողովրդական պար)	10
	ԸՆԴԱՄԵՆԸ	20

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)	Անվճար տեղերը (միջնակարգ կրթությամբ)	Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ)
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա	10	10	-	15
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	15	10	-	15
2203	Համակարգիչների շահագործում	-	-	5	15
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում	20	10	-	15
2311	Հասարակական սնունդ	15	10	-	15
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	20	10	-	15
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	10	10	-	15
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	10	-	-	15
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	10	10	-	-
	Պահուստային տեղեր	5	-	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	115	70	5	120

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (միջնակարգ կրթությամբ)
1207	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա	15	10	-
2203	Համակարգիչների շահագործում	15	10	20
2304	Վարավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում	15	10	20
2311	Հասարակական սնունդ	15	10	-
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	15	10	-
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	15	10	-
2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում	15	10	-
2907	Ատաղձագործություն, մանրահատակագործություն	15	10	-
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	15	10	-
	Պահուստային տեղեր	5	-	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	140	90	40

**7. ՇՈՒՇԻՒ «ԵԶՆԻԿ ՄՈԶՅԱՆ» ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)**

Դասիչը	Մասնագիտության անվանումը	Անվճար տեղերը (հիմնական կրթությամբ)	Վճարովի տեղերը (հիմնական կրթությամբ)
1003	Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	20	10
1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում	20	10
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա	20	10
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	15	10
2902	Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում	20	10
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	20	10
	Պահուստային տեղեր	5	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	120	60

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 284-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 722 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Չաշխատող անձին մայրության նպաստ, մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը սահմանելու մասին» N722 որոշմամբ հաստատված հավելվածում՝

1) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով.

«2.1) մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրը ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած անհատ ձեռնարկատիրոջը.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին կետ.

«5.1. Սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում ներկայացվում է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից անհատ ձեռնարկատիրոջը տրված՝ արտոնագրային վճար վճարող հանդիսանալու մասին արտոնագիրը և դրա պատճենը:».

3) 6-րդ կետի 1-ին ենթակետում «նպաստ և» բառերը փոխարինել «նպաստի և» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ 1-ին կետի 1-ին ենթակետի գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների (այն դեպքերի, երբ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունքն առաջացել է 2017 թվականի հունվարի 1-ից հետո) վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 285-Ն

ք. Ստեփանակերտ

ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Հաստատել վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում հաստատել վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման պայմանագրի ձևը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՎԱՐՁՍՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՄԱՆ
ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման հետ կապված հարաբերությունները:

2. Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակը վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովումն է:

3. Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ոլորտներն են՝ սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների վերանորոգման և հարակից տարածքների բարեկարգման, ներհամայնքային ճանապարհների, խճուղիների, մայթերի, այգիների, պուրակների, խաղահրապարակների, պետական, պատմական հուշարձանների, թանգարանների հարակից տարածքների, գերեզմանատների ցանկապատման, բարեկարգման և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման օժանդակ աշխատանքները:

4. Ծրագիրն առաջնահերթության կարգով իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում:

5. Ծրագրով նախատեսված աշխատանքներում ընդգրկվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատանքի և զբաղվածության գործակալությունում (այսուհետ՝ գործակալություն) հաշվառված գործազուրկները: Առաջնահերթությունը տրվում է ծրագիրը ներկայացրած համայնքի գործազուրկներին:

6. Ծրագրի իրականացման առավելագույն ժամկետը երեք ամիս է:

7. Ծրագիրը ֆինանսավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մասնավորապես «Պետական աջակցություն գործազուրկներին», ծրագրի միջոցների հաշվին:

8. Ծրագրի արժեքը չի կարող գերազանցել 2 000 000 ՀՀ դրամը:

Կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց մեկ աշխատանքային օրվա համար առավելագույնը վճարվում է 6 330 ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը:

9. Համայնքի ղեկավարը՝

1) ապահովում է գործակալությունում չհաշվառված, գործազուրկի կարգավիճակ չստացած անձանց հաշվառումը գործակալությունում:

2) գնահատելով համայնքում հասարակական աշխատանքների իրականացման կարիքը՝ երեք օրինակից կազմում է հասարակական աշխատանքների իրականացման ծրագիր (ծրագրեր) և ներկայացնում շրջանի վարչակազմ:

10. Սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ծրագրում նշվում են՝ իրականացման նպատակը, կատարման ենթակա աշխատանքների ժամանակահատվածը, աշխատանքների (ծառայությունների) բնույթը, ծավալը, իրականացման համար անհրաժեշտ աշխատողների թվաքանակը, օրերի թիվը, անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման, տեղափոխման, աղբահանության և այլ ծախսերի համար նախատեսվող գումարի հարաբերակցությունը ծրագրի ընդհանուր արժեքի նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ:

Համայնքի կողմից ներդրումներ կատարելու հնարավորության առկայության դեպքում նշում ներդրումների չափի մասին:

11. Շրջանի վարչակազմը երկշաբաթյա ժամկետում նախարարության հետ համաձայնեցնում և հաստատում է սույն կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ծրագիրը (ծրագրերը): Ներկայացված ծրագրերի իրականացման հերթականությունը որոշում է նախարարությունը:

12. Հաստատված ծրագրի մեկական օրինակները մնում են նախարարությունում և շրջանի վարչակազմում, իսկ մեկ օրինակը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում է համայնքի ղեկավարին:

13. Ծրագիրը մերժվում է, եթե չի բավարարում սույն կարգի պահանջները:

14. Գործակալությունը, ծրագիրը հաստատվելուց հետո, համայնքի ղեկավարի հետ երկու օրինակից կնքում է վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման պայմանագիր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հաստատած ձևին համապատասխան:

15. Համայնքի ղեկավարը՝

1) սույն կարգի 14-րդ կետում նշված պայմանագիրը կնքելուց հետո նախապես համաձայնեցված աշխատողների հետ կնքում է աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրեր և դրանց պատճենները երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում գործակալություն:

2) սույն կարգի 10-րդ կետում նշված ծառայությունների մատուցման նպատակով կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի և ապրանքների ձեռքբերումը հավաստող փաստաթղթերի պատճենները հաշվետու ամսվա համար ներկայացվող կատարողական ակտի հետ միասին ներկայացնում է գործակալություն:

16. Համայնքի ղեկավարը մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա երրորդ աշխատանքային օրը գործակալություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կատարողական ակտ:

17. Շրջանի վարչակազմի և գործակալության մասնագետները կատարողական ակտի հիման վրա տեղում ստուգում են կատարված աշխատանքների համապատասխանությունը կատարողական ակտում ներկայացված ծավալներին:

18. Շրջանի վարչակազմի և գործակալության մասնագետների կողմից սույն կարգի 17-րդ կետում նշված ստուգման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում համայնքի ղեկավարը ողջամիտ ժամկետում միջոցներ է ձեռնարկում դրանք վերացնելու և գործակալություն կատարողական ակտ ներկայացնելու ուղղությամբ:

19. Գործակալությունը կատարողական ակտի հիման վրա, ֆինանսավորման նպատակով, երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմում և նախարարության աշխատակազմ է ներկայացնում ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում իրականացված աշխատանքների մասին ամփոփ տեղեկություն:

20. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ամփոփ տեղեկությունը ստանալուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում ֆինանսավորման հայտ-պահանջագիր:

21. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ֆինանսական միջոցները ստանալուց հետո նախարարության աշխատակազմը դրանք փոխանցում է համապատասխան համայնքի բյուջե:

22. Համայնքը կատարած աշխատանքների և (կամ) մատուցած ծառայությունների և (կամ) ձեռք բերած ապրանքների դիմաց վճարումները կատարում է սույն կարգի 21-րդ կետում նշված ֆինանսական միջոցները ստանալուց հետո նախապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե փոխանցելով կատարած աշխատանքների և (կամ) մատուցած ծառայությունների դիմաց եկամտային հարկը:

23. Օրագրի իրականացման ընթացքում բացահայտված խնդիրների վերլուծության, ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով նախարարությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում է մոնիթորինգ և գնահատում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017թ.

N 286-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ու մ է**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության բաժինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության գործակալության վերակազմակերպելու և գործակալության կանոնադրությունը հաստատելու մասին» N 328-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին ենթակետ.

«8.1) իրավիճակից բխող այլ զբաղվածության պետական ծրագրերի մշակում.».

2) 9-րդ, 12-րդ, 17-18-րդ, 25-26-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի «Աշխատանք փնտրող անձի հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման կարգն ու ժամկետները, աշխատանք փնտրող անձի հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 334 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 259-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ ենթակետերով.

«4.1) լրացել է օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը կամ դադարել է բնակվելու իրավունքը.

4.2) հանվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառումից.».

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 25-ի «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 31-ի N 538 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 261-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 29-րդ կետից հանել «Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով՝ ուսուցումն ավարտելուց հետո երեք ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորված և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը հարաբերվում է ծրագիրն ավարտածների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով: Աշխատանքից ազատվածների թվից հանվում է այն անձանց թիվը, որոնք աշխատանքից ազատվելուց հետո տասնօրյա ժամկետում տեղավորվել են աշխատանքի: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան

չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:» նախադասությունները:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Աշխատանքի տոնավաճառի կազմակերպման կարգը սահմանելու մասին» N 504-Ն որոշմամբ սահմանված հավելվածի՝

1) 2-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կայուն» բառը.

2) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11.Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծրագրի ֆինանսավորման հայտ-պահանջագիրը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն:»:

3) 12-րդ կետից հանել «և Էկոնոմիկայի» բառերը:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի ««Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտեր սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N663-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանում «և 6-րդ կետերին» բառերը փոխարինել «կետին» բառով, «և 3-րդ կետերին» բառերը փոխարինել «կետին» բառով, իսկ «3-6-րդ կետերին» բառերը՝ «3-րդ կետին» բառերով.

2) որոշման 1-ին կետի 3-րդ, 9-րդ, 12-14-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

3) որոշման 2-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետից հանել «աշխատանք փնտրող անձանց համար իրականացվող յուրաքանչյուր զբաղվածության պետական ծրագրի համար նախատեսված չափանիշների կշիռները», «Ժամանակավոր հանձնաժողովի գործունեության կարգը և կազմը», «, փոխհատուցման հավաստագրի ձևը» բառերը,

բ. 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

4) որոշմամբ սահմանված N 1 հավելվածի՝

ա. 3-րդ կետից հանել «կայուն» բառը,

բ. 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «, սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային» բառերը.

5) որոշմամբ սահմանված N 2 հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կայուն» բառը.

6) N 3, N 9, N 12, N 13, N 14 հավելվածներն ուժը կորցրած ճանաչել.

7) որոշմամբ սահմանված N 5 հավելվածի՝

ա. 6-րդ կետի 1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 7-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «և որպես վերջնական արդյունք՝ կայուն զբաղվածության» բառերը,

գ. 10-րդ կետի 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

դ. 12-րդ կետի 13-րդ ենթակետից հանել «՝ հիմք ընդունելով ծրագրի կայուն զբաղվածության ցուցանիշի չափանիշը» բառերը,

ե. 15-րդ կետից հանել «ու ծրագրի կայուն զբաղվածության ցուցանիշի չափանիշը» բառերը.

8) որոշմամբ սահմանված N 6 հավելվածի՝

ա. 2-րդ կետից հանել «և այդ ճանապարհով կայուն զբաղվածության ապահովումը» բառերը,

բ. 11-րդ կետում «առնվազն մեկուկես տարի ժամկետով, որից վեց ամիսը աջակցության տրամադրման ժամանակահատվածն է» բառերը փոխարինել «վեց ամիս ժամկետով» բառերով,

գ. 26-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

դ. 28-րդ կետում «և պայմանագրով սահմանված դեպքերում և» բառերը փոխարինել «սահմանված» բառով,

ե. 29-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 33-րդ կետից հանել «Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագիրն ավարտելուց հետո ծրագրում ներառվածների և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:» նախադասությունները.

9) որոշմամբ սահմանված N 8 հավելվածի՝

ա. 2-րդ կետից հանել «կայուն» բառը,

բ. 23-րդ կետից հանել «Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագիրն ավարտելուց հետո երեք ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորված և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկվածների ընդհանուր թվին և արտահայտվում տոկոսով: Աշխատանքից ազատվածների թվից հանվում է այն անձանց թիվը, որոնք աշխատանքից ազատվելուց հետո տասնօրյա ժամկետում տեղավորվել են աշխատանքի: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:» նախադասությունները.

10) որոշմամբ սահմանված N 11 հավելվածում՝

ա. 2-րդ կետում «ընձեռնման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն» բառերը փոխարինել «ընձեռումն» բառով, իսկ «կայուն» բառը հանել,

բ. 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20. Ենթածրագիր 1-ի շրջանակներում գործատուին տրամադրված, ինչպես նաև զբաղվածության պետական համապատասխան ծրագրի իրականացման համար ծախսված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման «Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»,

գ. 40-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«40. Ենթածրագիր 2-ի շրջանակներում գործատուին տրամադրված, ինչպես նաև զբաղվածության պետական համապատասխան ծրագրի իրականացման համար ծախսված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման «Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»,

դ. 41-րդ կետից հանել «Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. գործատուին միանվագ փոխհատուցումը տրամադրելուց հետո աշխատանքի ընդունված անմրցունակ անձանց և այդ անձանցից՝ մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվի տարբերությունը հարաբերվում է գործատուին միանվագ փոխհատուցումը տրամադրելուց հետո աշխատանքի ընդունված անմրցունակ անձանց թվի վրա և արտահայտվում է տոկոսով: Ընդ որում, Ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:» նախադասությունները:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 ապրիլի 2017թ.

N 292-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առաջադրում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2
 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

բաժին	խումբ	դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	-	-	-	-
	2		Մշակութային ծառայություններ	-	-	-	-
		5	Արվեստ	-	-	-	-
		04	Մշակութային միջոցառումներ	-	(4000,0)	-	-
			ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	-	(4000,0)	-	-
		06	Կենտրոնացված կարգով մշակութային օջախների համար գույքի ձեռքբերում	-	4000,0	-	-
			ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	-	4000,0	-	-

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿՎԱԿԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քրեական գործ ԸԻԴ 0052/01/2016թ.

Քրեական գործ ԸԻԴ 0052/01/2016թ.

Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան
Դատավորներ՝ Շ. Աբրահամյան
Ն. Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

5-ին ապրիլի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Գ.Գրիգորյանի
դատավորներ՝ Ա.Հայրապետյանի
Վ.Հովսեփյանի

դռնբաց դատական նիստում քննելով ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ԼՂՀ Ազգային ժողովի 25.08.2016թ. Ն-098-6 որոշման 1-ին մասի 3-րդ ենթակետի կիրառմամբ Հայկ Ղարիբի Հակոբյանին ազատազրկման ձևով նշանակված պատժից ազատելու մասին քրեական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի փետրվարի 8-ի որոշման դեմ դատապարտյալ Հ.Հակոբյանի պաշտպան Է.Բեգլարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նան՝ Առաջին ատյանի դատարան) 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը, Գևորգ Գեղամի Բաբայանը և Համլետ Վլադիմիրի Աբրահամյանը մեղավոր են ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ: Գևորգ Բաբայանի և Համլետ Աբրահամյանի նկատմամբ որպես պատիժ յուրաքանչյուրին նշանակվել է 2 տարի ժամկետով ազատազրկում, պատիժները պայմանականորեն չկիրառելով սահմանվել է փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայկ Հակոբյանը դիտավորությամբ կատարած հանցագործության համար ունեցել է դատվածություն և սույն գործով մեղադրվել է դիտավորյալ միջին ծանրության հանցագործություն կատարելու մեջ, Առաջին ատյանի դատարանի դատավճռով նրան մեղսագրվող արարքը համարվել է ռեցիդիվ և որպես պատիժ նշանակվել է 2 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկում, ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, փոխարինվել է կալանավորմամբ:

Առաջին ատյանի դատարանի 2016թ. օգոստոսի 29-ի որոշմամբ Հայկ Հակոբյանը, Գևորգ Բաբայանը և Համլետ Աբրահամյանը ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի Ն-098-6 որոշման /այսուհետ նան՝ Համաներման ակտ/ 1-ին կետի կիրառմամբ ազատվել են 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժի կրումից:

Նշված որոշման դեմ՝ Հայկ Ղարիբի Հակոբյանին պատժից ազատելու մասով, 2016թ. սեպտեմբերի 9-ին վերաքննիչ բողոք է բերել ԼՂՀ դատախազության Ասկերանի շրջանի դատախազը:

Վերաքննիչ դատարանի 2017թ. փետրվարի 8-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Առաջին ատյանի դատարանի 2016թ. օգոստոսի 29-ի որոշումը՝ Հայկ Ղարիբի Հակոբյանի մասով բեկանվել է:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ 2017թ. մարտի 1-ին վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Հ.Հակոբյանի պաշտպան Է.Բեգլարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գերագույն դատարանի 2017թ. մարտի 15-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

2.Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, նրան մեղսագրվող արարքը համարվել է ռեցիդիվ և որպես պատիժ նշանակվել է 2 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկում /հ.2, գ.թ.69-72/:

2. Նախաքննության ընթացքում ԼՂՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տեղեկանքից հետևում է, որ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 18.03.2013թ. դատավճռով նշանակված պատժի կրումից /800.000 ՀՀ դրամի չափով տուգանք/ Հայկ Ղարիբի Հակոբյանն ազատվել է 22.10.2013թ.՝ համաներման մասին որոշման հիման վրա: Նույն տեղեկանքից հետևում է, որ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.06.2014թ. դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել տուգանքի 1.000.000 ՀՀ դրամի չափով: Ըստ տեղեկանքի՝ պատժի կրման կամ պատժից ազատման վերաբերյալ տեղեկություն չկա /հ.1, գ.թ.95/:

3. 2013թ. մարտի 18-ի ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԿԴ 1/0006/01/13 գործով կայացրած դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ 2 դրվագով և 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով՝ 5 դրվագով: Նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակվել տուգանք՝ 800.000 ՀՀ դրամի չափով /հ.2, գ.թ.21-27/:

4. 2014թ. հունիսի 26-ի ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ՏԴ 0035/01/14 գործով կայացրած դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել տուգանքի՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով /հ.2, գ.թ.28-35/:

5. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի 01.09.2016թ. գրության համաձայն՝ Հայկ Ղարիբի Հակոբյանը /ծնված 10.10.1988թ./ 26.06.2014թ. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է տուգանքի՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով: 09.12.2014թ. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տուգանքը տարաժամկետով է 1 տարի ժամկետով: Հ.Հակոբյանը 05.02.2015թ. կատարել է 100.000 ՀՀ դրամի վճարում, որից հետո որևէ վճարում չունի: Տուգանքը գտնվում է կատարման փուլում /հ.2, գ.թ.100/:

6. ԼՂՀ հոչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ԼՂՀ Ազգային ժողովի Ն-098-6 որոշումն ուժի մեջ է մտել 2016թ. օգոստոսի 25-ին:

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ: Ըստ նրան խախտվել են ԼՂՀ քրեական օրենսգրքի 4-րդ, 47-րդ և 81-րդ հոդվածների, ինչպես նաև ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ԼՂՀ Ազգային ժողովի Ն-098-6 որոշման պահանջները:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն էական նշանակություն է տվել այն փաստին, որ Հ.Հակոբյանը 26.06.2014թ. դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել տուգանքի 1.000.000 ՀՀ դրամի չափով, տուգանքը տարածամկետվել է և գտնվում է կատարման փուլում: Գտնում է, որ դա խոչընդոտ չէ իր պաշտպանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ համաներում կիրառելու համար, քանի որ նա Արցախի Հանրապետության համար հանդիսանում է օտարերկրյա քաղաքացի և «ստացվում է այնպես», որ նա Արցախի Հանրապետությունում առաջին անգամ է կատարել հանցագործություն:

Բողոքաբերը նշել է, որ առկա է օրենքի միատեսակ կիրառելիության խնդիր և խնդրել է բողոքն ընդունել վարույթ, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանել, օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի 2016թ. օգոստոսի 29-ի որոշմանը:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի իրացումն է: Բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ԼՂՀ Ազգային ժողովի Ն-098-6 որոշումը կիրառելու հարցը լուծելիս ստորադաս դատարանները արդյոք պետք է հաշվի առնեին ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը, թե նրան պետք է համարեին առաջին անգամ հանցագործություն կատարած անձ:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը:

ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ԼՂՀ Ազգային ժողովի Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը սահմանում է հետևյալը. պատժից ազատել, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով և 9-րդ կետով նախատեսված դեպքերի՝ այն անձանց, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

Որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ համաներումը չկիրառել՝ այն անձանց նկատմամբ, որոնք նախնական կալանքի տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում սույն որոշման կիրառման օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Համաներման ակտի 12-րդ կետի 1-ին ենթակետը որոշման կատարումը վերապահել է դատարաններին՝ ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում, սակայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց

վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել ... :

Սույն քրեական գործով դատավճիռը կայացվել է 2016թ. հուլիսի 28-ին, այն չի բողոքարկվել և դատավճիռի օրինական ուժի մեջ մտնելու օրն էր հանդիսանում 2016թ. օգոստոսի 29-ը: Համաներման ակտն ուժի մեջ է մտել 2016թ. օգոստոսի 25-ին, և, ինչպես հետևում է Համաներման ակտի 12-րդ կետի 1-ին ենթակետից, Առաջին ատյանի դատարանի վրա էր դրված նշած որոշման կիրառման հարցի լուծումն այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել:

Առաջին ատյանի դատարանը 2016թ. օգոստոսի 29-ին Համաներման ակտի կիրառման հարցը քննարկելով, որոշում է կայացրել Հայկ Հակոբյանի նկատմամբ ԼՂՀ հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը կիրառելու և 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատժի կրումից ազատելու մասին:

Նշված որոշումը կայացնելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն հանգամանքները, որ հանցանքը կատարվել է մինչև 2016թ. օգոստոսի 1-ը և հանցագործությամբ պատճառված վնասը հարթված է:

Վերաքննիչ դատարանը նշված որոշումը Հայկ Հակոբյանի մասով բեկանելիս արձանագրել է, որ նա ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ՏԴ 0035/01/14 քրեական գործով 26.06.2014թ. դատավճռով որպես պատիժ նշանակված 1.000.000 ՀՀ դրամի չափով տուգանքի գումարը լրիվությամբ չվճարելով, այսինքն՝ պատիժը կրելու ընթացքում, կրկին կատարել է դիտավորյալ հանցագործություն, ուստի Համաներման ակտի 9-րդ կետի 3-րդ ենթակետը բացառում է նրա նկատմամբ Համաներման ակտի կիրառումը:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումը հիմնավոր է՝ ելնելով հետևյալից.

Առաջին ատյանի դատարանը սույն քրեական գործը քննել է արագացված կարգի կիրառմամբ և 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով Հայկ Հակոբյանին մեղավոր է ճանաչել ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ: Դատաքննության ընթացքում ամբաստանյալ Հայկ Հակոբյանը ցուցմունք է տվել, որ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.06.2014թ. դատավճռով որպես պատիժ նշանակված տուգանքն ամբողջությամբ չի վճարել:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Հայկ Հակոբյանը ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.06.2014թ. դատավճռով դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով, որը համապատասխանում է ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասին և դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին:

Հաշվի առնելով, որ ամբաստանյալ Հայկ Հակոբյանը դիտավորյալությամբ կատարած հանցագործության համար ուներ դատվածություն և սույն քրեական գործով մեղադրվում էր դիտավորյալ միջին ծանրության հանցագործություն կատարելու մեջ, Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Հայկ Հակոբյանին մեղսագրվող արարքը ԼՂՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով համարել է ռեցիդիվ և պատիժ նշանակել ԼՂՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը կարող է հաշվի առնվել, եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը դատապարտվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս

կատարած հանցանքի համար և կրկին հանցանք է կատարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասին համապատասխան հանցագործությունների ռեցիդիվը, չկրած պատիժը կամ օտարերկրյա պետության դատարանի դատավճռի այլ իրավական հետևանքները հաշվի են առնվում նոր հանցանքը որակելիս, պատիժ նշանակելիս, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս:

Նշված իրավական նորմից ուղղակիորեն բխում է, որ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը կարող է հաշվի առնվել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս, եթե անձը դատապարտվել է ԼՂՀ տարածքից դուրս կատարած հանցանքի համար և կրկին հանցանք է կատարել ԼՂՀ տարածքում: Ու օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը հաշվի առնելու դեպքում դատարանները պետք է հաշվի առնեն նաև նշված դատավճռի իրավական հետևանքները, այդ թվում նաև՝ հանցագործությունների ռեցիդիվը, չկրած պատիժը, պատճառված վնասի հարթված լինելը և այլն:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է Առաջին ատյանի դատարանի հայեցողական լիազորությունը՝ համապատասխան պայմաններում օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը հաշվի առնելու վերաբերյալ: Սակայն այն հաշվի առնելու դեպքում նույն հոդվածի 2-րդ մասը պարտադիր է համարում հանցագործությունների ռեցիդիվը, չկրած պատիժը կամ օտարերկրյա պետության դատարանի դատավճռի այլ իրավական հետևանքները հաշվի առնելը՝ նոր հանցանքը որակելիս, պատիժ նշանակելիս, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս:

Գերագույն դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը սույն գործով իրավացիորեն է կիրառել իր հայեցողական լիազորությունը և դատավճիռ կայացնելիս հաշվի առել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.06.2014թ. դատավճիռը:

Գերագույն դատարանը հիմնավոր է համարում նաև Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.06.2014թ. դատավճռի իրավական հետևանքները հաշվի առնելը՝ Համաներման ակտի կիրառման և պատժից ազատման հարցը լուծելիս:

Ավելին, Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների քրեաիրավական դաշտը հիմնականում նույնական է, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, որպես կանոն, պետք է կիրառեն ԼՂՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածով դատարաններին վերապահած հայեցողական լիազորությունը և դատական ակտերը կայացնելիս հաշվի առնեն Հայաստանի Հանրապետության դատարանների դատավճիռները:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Համաներման ակտն իրենից ներկայացնում է ինքնուրույն գործող իրավական ինստիտուտ, որի կիրառելիության հիմքում դրված են քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան նորմերը: Այն հանդիսանում է օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունվող մարդասիրական բնույթ ունեցող պետաիրավական նորմատիվ ակտ, որով հանցանք կատարած անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը կամ վերացվել դատավճռությունը: Համաներման ակտի կիրառման սահմանափակումները նախատեսված են ինչպես Համաներման ակտով, այնպես էլ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով:

Մինչև ժամանակ, Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել Համաներման ակտի դրույթների և դրանով նախատեսված սահմանափակումների անվերապահորեն կատարելու անհրաժեշտությունը, քանի որ սահմանված կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված

համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականությունների, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառության:

Այսպիսով, սույն գործով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները Գերագույն դատարանը գտնում է հիմնավորված և օրինական, իսկ նյութական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկները՝ անհիմն, ուստի պետք է կիրառել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը և վճռաբեկ բողոքը մերժել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-424-րդ, 436-րդ, 438-440-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դատապարտյալ Հայկ Հակոբյանի պաշտպան Է.Բեգլարյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի փետրվարի 8-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ**

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել Պատասխանողն ու նրա ներկայացուցիչ Ռ.Մարտիրոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-49-րդ հոդվածները, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ, 878-րդ հոդվածները, չի կիրառել կիրառման ենթակա 882-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոքաբերը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-49-րդ հոդվածների պահանջների խախտման մասին իր փաստարկները հիմնավորել է նրանով, որ գործի փաստական հանգամանքները վկայում են ստորադաս դատարանների կողմից իրենց դատական ակտերի հիմքում բացառապես քրեական գործի նյութերը դնելու մասին:

Մինչդեռ, քրեական գործի նյութերը կարող են ապացույց հանդիսանալ միայն դատական քննության ընթացքում հետազոտված այլ ապացույցների հետ համադրման և օբյեկտիվ գնահատման արդյունքում: Սույն գործով Հայցվորը, բացի քրեական գործի վարույթի կարճման մասին որոշումից, այլ ապացույց չի ներկայացրել և դատական նիստում ոչ թե ցուցմունք է տվել, այլ բացատրություն /որն ապացույցի ուժ չունի/: Այսինքն՝ Հայցվորը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի ուժով կրելով ապացուցման առարկայի ապացուցման պարտականությունը, գործի օբյեկտիվ լուծման համար պարտավոր էր ներկայացնել արժանահավատ ապացույցներ, որոնք քրեական գործի նյութերի հետ միասին օբյեկտիվ պատկերացում պետք է տան գործի հանգամանքների մասին:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ, 882-րդ հոդվածների բովանդակությունը, բողոքաբերը նշել է, որ Պատասխանողը վիճարկել է փոխառության պայմանագիրը՝ իրականում Հայցվորից դրամ չստանալու հիմքերով: Հետևապես, ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը պետք է հաստատված համարեին, որ փոխառության պայմանագիր չի կնքվել: Ստորադաս դատարանները ապացույցները սխալ գնահատելու պատճառով խախտել են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ և 878-րդ հոդվածների պահանջները, չեն կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեին:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները պետք է հաշվի առնեին հետևյալ հանգամանքները. գործով առկա չէ փոխառության գումարը ստանալու մասին վկայող որևէ ստացական, Պատասխանողը չի ընդունել պարտքով գումար ստանալու փաստը, Ի.Հայրապետյանը չի հաստատել 280.000 /երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ կազմող գումարը Ս.Դադայանից ստանալու փաստը, մինչդեռ Ս.Դադայանը նման ցուցմունք է տվել, ԼՂՀ Գլխավոր դատախազության կողմից տրված տեղեկանքից հետևում է, որ գործում առկա են իրարամերժ ցուցմունքներ:

Վերաքննիչ դատարանում Պատասխանողը պնդել է, որ քրեական վարույթ իրականացնող մարմնի կայացրած որոշման նկարագրական մասում բերված ապացույցները մեկը մյուսի հետ գտնվում են հակասությունների մեջ, և նման հակասությունները վկայում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից գործով ոչ օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն իրականացնելու մասին:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ սույն գործով Գերագույն դատարանի կողմից կայացվելիք որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, և որ առկա է դատական սխալ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. փետրվարի 10-ի որոշումը, կայացնել ըստ էության դատական ակտ՝ հայցը մերժելու մասին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/ Կողմերի միջև փոխառության պայմանագիր չի կնքվել և գրավոր այլ փաստաթուղթ, այդ թվում՝ ստացական, չի կազմվել:

2/ ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության Ստեփանակերտի քննչական բաժնի քննիչ Գ.Ղարիբյանի կողմից 26.01.2016թ. ընդունված՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ /այսուհետ՝ նաև քրեական հետապնդման մարմնի որոշում/ արձանագրվել է. «Թեկուզ քրեական գործի նյութերով հաստատվել է այն հանգամանքը, որ Կ.Հակոբյանը 2014թ. դեկտեմբերի 25-ին՝ կեսօրին, 1.000.000 ՀՀ դրամ գումար է պարտքով վերցրել Ս.Դադայանից և գնացել քաղաք Երևան գնումների համար, որը հաստատվում է ականատես վկաների ցուցմունքներով, հեռախոսագրանգների վերծանումներով, ըստ որի՝ բազմաթիվ անգամ Ս.Դադայանը զանգահարել է Կ.Հակոբյանին, սակայն վերջինս չի պատասխանել, բայց քրեական գործի նյութերում չկա որևէ փաստական տվյալ այն մասին, թե ինչ հանցավոր վարքագիծ է դրսևորել Կ.Հակոբյանը... ուստի անհրաժեշտ է Կ.Հակոբյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով, նախատեսված ԼՂՀ քր.դատ.օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով»:

Նշված որոշումը վերադասության կամ դատական կարգով բեկանված չէ:

3/ Հայցվոր Ս.Դադայանը հայցը ներկայացրել է անվավեր գործարքով ստացածը վերադարձնելու հիմքով:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով այն է՝

1/ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և տվյալ դեպքում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-50-րդ հոդվածների վերաբերյալ Գերագույն դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար.

2/ Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Բողոքի քննության հիմքերի սահմաններում Գերագույն դատարանը պետք է դիրքորոշում հայտնի այն հարցի վերաբերյալ, թե արդյոք սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները պահպանել են քրեական հետապնդման մարմնի որոշումը որպես ապացույց օգտագործելու կանոնները և պատշաճ իրավական գնահատական են տվել գործով առկա բոլոր ապացույցներին:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ

հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Նշված իրավական նորմերի մեկնաբանությունից հետևում է, որ գործով ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք, որ եթե գործին մասնակցող անձը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել, նա իրավունք ունի այդ ապացույցը ձեռք բերելու համար դիմել դատարան, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն է, մեկ ապացույցը մյուս ապացույցների միջոցով ստուգելը, ներկայացված ապացույցների միջև եղած հակասությունները վեր հանելը և վերացնելը, որի արդյունքում դատարանը պետք է գնահատի յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը և գնահատի ապացույցները՝ արժանահավատության և բավարարության տեսակետից: Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատական ապացուցման նպատակը գործի իրական հանգամանքների, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության հաստատումն է:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով ապացուցման առարկան է հանդիսանում պատասխանող Կ.Հակոբյանի կողմից հայցվոր Ս.Դադայանից 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ վերցնելու փաստը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առջինն է:

Հոդվածի մեկնաբանությունից հստակ հետևում է, որ օրենսդիրը որևէ այլ պահանջ չի ներկայացնում նշված փաստաթղթի ձևին և բովանդակությանը, հետևաբար դրա վերաբերյալ գործում են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներին ներկայացվող պահանջները, իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով գրավոր ապացույցների հասկացությունը, ամրագրում է, որ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, ...այլ փաստաթղթերը և նյութերը...:

Կրկին անդրադառնալով գործի լուծման համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցների վերաբերելիության հարցին, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դատարանն ապացույցների վերաբերելիության կանոնները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ վերաբերելի են այն ապացույցները, որոնք անհրաժեշտ են քննվող գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Ինչ վերաբերում է քրեական հետապնդման մարմնի որոշմանը, որպես գործով ստորադաս դատարանների կողմից հայցը բավարարելու հիմքում դրված վերաբերելի ապացույց ճանաչելուն, Գերագույն դատարանը փաստում է հետևյալը. քրեական հետապնդման մարմնի որոշմամբ արտացոլած

հանգամանքները չունեն ԼՂՀ քաղաքացիական դատավարության 48-րդ հոդվածի իմաստով նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ, դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, հետևաբար դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործի շրջանակներում պարտավոր է տալ նաև այդ ապացույցների իրավական գնահատականը:

Սույն գործով հայցվոր Ս.Դադայանը, դիմելով դատարան, խնդրել է պատասխանող Կ.Հակոբյանից բռնագանձել 720.000 /յոթ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ՝ որպես 2014թ. դեկտեմբեր ամսին 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ պարտք վերցրած գումարի մնացորդ: Քանի որ կողմերի միջև գրավոր փաստաթուղթ չի կազմվել, խնդրել է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի, 878-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի, 304-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները և հիմք ընդունել ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության Ստեփանակերտի քննչական բաժնի ավագ քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 26.01.2016թ. որոշումը:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ Առաջին ատյանի դատարանը 2016թ. նոյեմբերի 28-ի վճռով բավարարելով հայցը, պատճառաբանել է. «Դատարանը արձանագրում է, որ հայցվորի ցուցմունքը և գրավոր ապացույց հանդիսացող քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 26.01.2016թ. որոշումը, հայցվորի հարցաքննության արձանագրությունը ուղղակիորեն վկայում են հայցվորից պատասխանողի 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ ստանալու փաստի մասին:

Վկաների արձանագրությունները անուղղակիորեն վկայում են հայցվորից պատասխանողի 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ ստանալու փաստի մասին:...

Գնահատելով նշված ապացույցները, Դատարանը գտնում է, որ գումարի ստացման վերաբերյալ ուղղակի և անուղղակի ապացույցները և քանակական և որակական հատկանիշներով գերակշռում են պատասխանողի ցուցմունքին և հարցաքննության արձանագրությանը, ուստի Դատարանը ոչ արժանահավատ է համարում պատասխանողի ցուցմունքով և հարցաքննության արձանագրությամբ հայտնած տեղեկությունները»:

Վերաքննիչ դատարանը նշված պատճառաբանությունները համարել է հիմնավոր և վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Մինչդեռ Գերագույն դատարանը 2016թ. հուլիսի 29-ի որոշմամբ նշել է, որ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի որոշումը, որպես գրավոր ապացույց, դատարանների կողմից բազմակողմանի չի հետազոտվել, դրա արդյունքում դատարանը որևէ գնահատական չի տվել որոշման մեջ արտացոլված վկաների ցուցմունքների հակասություններին, որոնցից հետևում է, որ որևէ վկա ներկա չի եղել հայցադիմումում նշված չափով գումար փոխանցելուն, իսկ գումարի չափի մասին վկաները ցուցմունքներ են տվել Ս.Դադայանի խոսքերից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերի համադրմամբ Գերագույն դատարանը շեշտել է, որ, թեև, վերը նշված փաստի հաստատումը մտնում էր քրեական գործով ապացուցման առարկայի մեջ, իսկ նախաքննության մարմնի բուն եզրահանգումն այդ փաստի առկայության վերաբերյալ հաստատված չէ ապացուցման ֆորմալ պահանջների պահպանմամբ՝ դատարանները դա հաստատված են համարել առանց անմիջականորեն հետազոտելու քրեական գործի նյութերը և ստուգելու պատասխանողի փաստարկները, ինչը հակասում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին,

համաձայն որոնց՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Այսինքն՝ քննիչի որոշումը տվյալ դեպքում չունի նախապես հաստատված ապացույցի ուժ և պետք է քննության և գնահատման առարկա դարձվի քաղաքացիական դատավարության ընթացքում:

Այսինքն, նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը պետք է պատշաճ քննարկման և իրավական գնահատման առարկա դարձնեք քրեական հետապնդման մարմնի որոշումը, որպես գրավոր ապացույց, անդրադառնար որոշման մեջ արտացոլած վկաների ցուցմունքների միջև առկա հակասություններին և դիրքորոշում հայտնեք սույն գործի համար այդ գրավոր ապացույցի վերաբերելիության մասին, ինչն անտեսվել է Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից, արդյունքում թույլ է տրվել էական դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ քրեական հետապնդման մարմնի որոշման մեջ նշված է հետևյալը. «Թեկուզ քրեական գործի նյութերով հաստատվել է այն հանգամանքը, որ Կ.Հակոբյանը 2014թ. դեկտեմբերի 25-ին՝ կեսօրին, 1.000.000 ՀՀ դրամ գումար է պարտքով վերցրել Ս.Դադայանից և գնացել քաղաք Երևան գնումների համար, որը հաստատվում է ականատես վկաների ցուցմունքներով, հեռախոսագանգերի վերծանումներով, ըստ որի՝ բազմաթիվ անգամ Ս.Դադայանը զանգահարել է Կ.Հակոբյանին, սակայն վերջինս չի պատասխանել, բայց քրեական գործի նյութերում չկա որևէ փաստական տվյալ այն մասին, թե ինչ հանցավոր վարքագիծ է դրսևորել Կ.Հակոբյանը... ուստի անհրաժեշտ է Կ.Հակոբյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով, նախատեսված ԼՂՀ քր.դատ.օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով»:

Մինչդեռ նշված որոշմամբ որևէ ձևով չի հաստատվել այն հանգամանքը, որ Կ.Հակոբյանն ընդունել է Ս.Դադայանի կողմից իրեն վիճելի հարաբերությունների շրջանակներում 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ փոխանցելու փաստը: Ավելին՝ վկաները ցուցմունքներում նշել են, որ վիճելի հարաբերության մասին տեղեկացած են Հայցվորից, ինչը չի կարող մեկնաբանվել, որպես ականատես վկաների ցուցմունքներ, ինչպես նաև Հայցվորի բացատրությունն իր հերթին, չի կարող դիտարկվել որպես ապացույց՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների շրջանակներում:

Չետևաբար, հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն գործում առկա չէ Պատասխանողին Հայցվորի կողմից նշված գումարը փոխանցելու մասին որևէ վերաբերելի ապացույց, Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ ոստիկանության քննչական վարչության Ստեփանակերտի քննչական բաժնի քննիչ Գ.Ղարիբյանի կողմից 2016թ. հունվարի 26-ի՝ «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշման նկարագրական մասում կատարած եզրահանգումները բավարար չեն սույն քաղաքացիական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար:

Այսպիսով, հիմնավոր են վճռաբեկ բողոքի փաստարկները՝ ստորադաս դատարանների կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-50-րդ հոդվածների պահանջների խախտման մասին:

Սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և փոփոխելու հայցը մերժելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս

դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Գերագույն դատարանի լիազորությունը:

Մույն գործով վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելը և փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանը փաստում է.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 7-րդ կետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններով:

Մույն գործով դատական ծախսերը կազմված են պետական տուրքից:

Վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար Պատասխանողը վճարել է ընդհանուր 86.800 /ութսունվեց հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, այսինքն, այդ գումարն անհրաժեշտ է եղել բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, իսկ հայցադիմումի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմում է 14.000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ հայցը՝ մերժման, Հայցվորից ենթակա է գանձման 101.200 /հարյուր մեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, որից՝ 14.000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ՝ հոգուտ ԼՂՀ պետական բյուջեի, որպես հայցադիմումի համար հետաձգված վճարման ենթակա պետական տուրքի գումար, իսկ 86.800 /ութսունվեց հազար ութ հարյուր/ ՀՀ դրամը՝ հոգուտ պատասխանող Կարինե Հակոբյանի՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. փետրվարի 10-ի որոշումը բեկանել և փոփոխել. Մուսաննա Դադայանի հայցը մերժել:

2. Հայցվոր Մուսաննա Դադայանից բռնագանձել 101.200 /հարյուր մեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, որից՝ 14.000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ՝ հոգուտ ԼՂՀ պետական բյուջեի, 86.800 /ութսունվեց հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ՝ հոգուտ պատասխանող Կարինե Հակոբյանի՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումար:

3. Պատասխանող Կարինե Հակոբյանի գույքի և դրամական միջոցների վրա հայցագնի՝ 720.000 /յոթ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամի չափով դրված արգելանքը վերացնել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություն Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
ստորագրություն Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ